21-27 ՕԳՈՍՏՈՍ 2026 ՈՒՐԲԱԹ 028(5896)

Azg Վազ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Գերմանական մրցանակ Փաշինյանին՝ Արցախը հանձնելու եւ «խաղաղասիրական ջանքերի համար»

«Հեսսենի երկրամասի խաղաղության այս տարվա մրցանակը շնորհվել է ՀՀ վարչապետին՝ Հարավային Կովկասում խաղաղության ջանքի համար: Նա պարգեւատրվում է ժողովրդավարությանն իր նվիրվածության, Ադրբեջանի հետ երկարատեւ հակամարտությունը խաղաղ կարգավորելու համար», օգոստոսի 20-ի առավոտվա լրահոսում հաղորդեց hessenschau-ն՝ հղում անելով նույն օրը երկրամասի լանդթագի տեղեկատվությանը: «ՀՀ-ն ավանդաբար ՌԴ-ի սերտ դաշնակիցն է եղել, սակայն Փաշինյանի օրոք այն առավելաբար դեպի Եւրոպա է կողմնորոշվում: 51-ամյա նախկին լրագրողը պարգեւատրվում է նաեւ ԼՂ հակամարտության հարցում իր քաղաքականության համար. Տարածաշրջանը տասնամյակներ վիճարկվել է ՀՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ՝ հանգեցնելով բռնության եւ պատերազմի»: Փաշինյանը 25 000 եվրո մրցանակը կստանա սեպտեմբերի 18-ին Վիսբադենում, Հեսսենի լանդթագում:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Ուրացողներին պարտադիր պետք է տանել պատմության թանգարան

Այլապես նրանք կշարունակեն մնալ իրենց երջանիկ տգիտության մեջ, Հայկական լեռնաշխարհում հայոց դարավոր պետականության պատմությունը ուրացող, համահունչ՝ ազերիների ցեղապետ Ալիեւի կեղծարարություններին: Ստիպողաբար նրանց պետք է տանել, նախ՝ Երեբունու, ապա՝ Պատմության պետական թանգարան, գուցե նաեւ՝ Մատենադարան: Սեփական աչքով նրանք պետք է տեսնեն, ծանոթանան պատմական անեղծանելի փաստերին, որպեսզի այսուհետեւ բնավ ու երբեք չկրկնեն տխմարություններ, որոնք, ի դեպ, վարակիչ են:

Այնտեղ՝ թանգարանում, նրանք կարող են ծանոթանալ, օրինակ, Արտաշես թագավորի զետեղած սահմանաքարերի նմուշներին՝ համապատասխան արձանագրությամբ, ու վերջապես հասկանալ, որ դարեր առաջ հայկական ու հզոր անկախ պետությունն իր հարեւան պետություններից սահմանազատման գործն արել-պրծել է, մինչ իրենք հինգ տարի արդեն չեն կարողանում այդ գործն անել...

Այնտեղ նրանք կարող են հասկանալ, թե ինչո՞ւ է ամբողջ աշխարհը հայերին ճանաչում որպես 301 թ.ին քրիստոնեությունը **պետականորեն** ընդունած ժողովուրդ: Առանց պետություն ունենալու կարելի՞ է պետականորեն ընդունել որեւէ բան:

Այնտեղ եւ հատկապես Մատենադարանում նրանք գուցե կարող են հասկանալ, որ 405 թ.ին հայոց այբուբենը եղել է, փաստորեն, պետական պատվեր, եւ Վռամշապուհ արքա՛ն է հովանավորել ու ֆինանսավորել Մեսրոպ Մաշտոցի ուղեւորությունները տարբեր երկրներ ու գրադարաններ, իսկ Գյուտից հետո կառուցել դպրոցներ ու դպրատներ՝ Վաղարշապատից մինչեւ Արցախ՝ Ամարաս, որպեսզի մաքրի նաեւ արցախցիների «խեցբեկագոյն» (բառը Խորենացունն է- **Հ.Ա.**) բարբառը:

Թերեւս առարկողներ լինեն՝ «իսկ նշյալ մարդիկ չե՞ն կարող այդ եւ նման փաստերին ծանոթանալ գրքերի միջոցով»:

Հաստա՛տ կարող են: Սակայն խնդիրն այն է, որ այդ մարդիկ չեն սիրում գիրք կարդալ, ո՛չ Խորենացի, ո՛չ Եղիշե, ո՛չ Եզնիկ, ո՛չ էլ այլ մատենագիրներ: Նրանք չեն սիրում կարդալ նաեւ նորերին՝ Մանանդյան, Օրմանյան, Ժամկոչյան եւ շատ ուրիշներ, ո՛չ հայերեն, ո՛չ էլ օտար լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն, նույնիսկ՝ թուրքերեն: Նրանք լայաղ չեն անգամ թերթատել ֆրանսահայ ակադեմիկոս, քարտեզագետ Զատիկ Խանզադյանի կազմած «Հայաստանի պատմական ատլասը», որը ամիսներ առաջ շքեղ տպագրությամբ հրատարակեց Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչությունը: Կրկնում եմ՝ թեկուզ թերթատել աշխարհի տարբեր թանգարաններից, գրադարաններից եւ արխիվներից պեղված հին հունական, բյուզանդական, արաբական աշխարհագրական քարտեզները, որոնցում հատիկ առ հատիկ հիշատակվում, տեղորոշվում է Հայաստան աշխարհն իր պետական հաջորդական կազմավորումներով՝ Արրատա-Ուրարտականից սկսած մինչեւ Արտաշիսյան, Արշակունիների, Բագրատունիների թագավորական դինաստիաների ժամանակաշրջան, մինչեւ, ավելի ուշ, Զաքարյանների, Պռոշյանների, մելիքական ու խանական (հայ) իշխանություններ:

Եվ այս բոլորի դիմաց, ուրանալով այդ բոլորը, ՔՊ-ականները, գլխավորությամբ իրենց առաջնորդի, վեր են կենում եւ խաշնարած ու քոչվոր ցեղախմբերի առաջնորդին համահունչ՝ հայտարարում, որ հայերն այս հողերի վրա բնավ չենք ունեցել անկախ պետականություն, պետական կարգավիճակ: Կարծես ուզում են ասել, որ անկախ միակ պետությունը իրենք են ստեղծել կամ շարունակում են.. ստեղծել:

Վա՜յ մեզ:

Արդարեւ, ուրացողներին շտապ պետք է տանել թանգարան, այլապես նրանք կկրկնեն Ալիեւի մյուս պնդումն էլ, թե ոչ թե ազերիներն են եկվոր այս կողմերում, այլ... հայերը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ձեւի եւ բովանդակության անտրամաբանությունը

ՍԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին օրերին նոր Ազգային ժողովի՝ Աժ ղեկավարություն ընտրելու նիստերն իսկական երեւակիչ էին առ այն, թե ինչպիսի Աժ է ներս թողել մեր ժողովուրդը: Այդ առումով տրամաբանական կլիներ, որ խորհրդարան անցած նոր ուժերն ու մարդիկ քիչ կամ ամենաանհրաժեշտը խոսեին (ավանդաբար այդպես է եղել), շաղ չտային իրենց մարգարիտները՝ մինչեւ սովորեին խորհրդարանական տրամաբանությունն եւ շատ թե քիչ փորձառություն ձեռք բերեին: Բայց այս խորհրդարանի դեպքում այդ չգրված կանոնը չգործեց ոչ Աժ ղեկավար կազմ, ոչ 12 առաքյալների, վայ, կներեք, Աժ 12 հանձնաժողովների նախագահի թեկնածուների հարցը քննարկելիս: Ու բոլորը, ամեն մեկն ու յուրաքանչյուրը՝ հին ու նոր, քառասուն աստիճան շոգին գրոհել էին Աժ ամբիոնն ու խոսափողները (այդ թվում՝ լրագրողական, մանավանդ Աժ նոր նախագահը հանել է լրագրողների մուտքն արգելող բոլոր սահմանափակումները), իմացած-չիմացած, հարկավոր-անհարկավոր մտքերը քվանտային արագությամբ մարդկանց հասանելի դարձնելով, մերկացնելով հին-նոր խորհրդարանի ողջ «պերճանքն ու շքեղությունը»:Թե ասա՝պատեհ-անպատեհ ո՞ւր եք նետվում դեպի խոսափողներ, ախր ի՞նչ ունեք ասելու, երբ մի լավ որ քրքրում ես-ամեն ինչ վաղօրոք բաժանված ու նախագծված է թվում ի սկզբանե՝ սցենարները, դերերը, դերակատարներն ու խոսույթը: Անգամ սկանդալներն ու Աժ նոր նախագահ ընտրված Ռուբեն Ռուբինյանի առաջարկած բարեկրթության պահպանման վերաբերյալ պայմանավորվածության խախտումները:

Հենց թեկուզ Աժ 12 հանձնաժողովների՝ Դոնթի բանաձեւի արդյունքում սամանված ձեւի մեջ՝բովանդակության ներքին անտրամաբանությունը: Այն հանգամանքը, որ ռուսամետ եւ եվրասիական քաղաքականությանը հակված համարվող ընդդիմադիր ուժը կարող է ընտրել Եվրահնտեգրման հանձնաժողովը ղեկավարելու գործը, իսկ եվրոպամետ համարվող իշխանական կուսակցությունը հանգիստ վերցնի Եվրասիական ինտեգրման հանձնաժողովը՝ ոչ միայն սովորական մահկանացուներիս, այլեւ փոքրամասնություններին ներկայացնող իշխանական պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովի զարմանքն էր հարուցել:

⇨3

«Եկեղեցու եւ կառավարության պայքարը անխուսափելիորեն թուլացնելու է երկու կողմին էլ՝ վնասելով նրանց հեղինակությանը, խորացնելով երկրի պառակտումը»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

«**Ազգի**» նախորդ՝ օգոստոսի 14-ի համարում անդրադարձել էինք Ամենայն հայոց կաթողիկոսի եւ 6 հոգեւորականների՝ օգոստոսի 7-ի դատավարության՝ գերմանալեզու մամուլի արձագանքներին, հրապարակել **Միշայել Հեզեմանի** ծավալուն հոդվածը:

Գերմանալեզու հոդվածագիրներն այս դատավարությանը հետեւում են ընդգծված հետաքրքրությամբ, լուսաբանում պատմակա՜ն այս իրադարձությունը տարբեր դիտանկյուններից՝ ոտնձգություն եկեղեցու անկախության, կրոնական ազատության դեմ, հասարակական- քաղաքական՝ արեւմտամերձ կառավարության եւ ՌԴ-ամերձ եկեղեցու պայքար եւ այլն: Ստորեւ ներկայացվող հրապարակումը լույս է տեսել օգոստոսի 14-ին կաթոլիկական «Թագեսփոստ» անդրտարածքային գերմանալեզու շաբաթաթերթում, հեղինակը **Շտեֆան Բայերն** (Stephan Baier) է: Հոդվածի հեղինակը աստվածաբանական կրթություն ունի, 1999-ից ի վեր «Թագեսփոստ»-ում լուսաբանում է Ավստրիայի, Հարավարեւելյան Եւրոպայի, եւրոպական քաղաքականությունը, 2023-ից՝ արտաքին քաղաքականության բաժնի ղեկավարն է, մի շարք գրքերի հեղինակ:

«Եկեղեցու եւ կառավարության միջեւ սրվող վեճը վնասում է երկու կողմի հեղինակությանը, պառակտում անբարյացակամ հարեւանների շրջապատում գտնվող երկիրը», գրում է Շտեֆան Բայերը, հոդվածի սկզբում նախ ներկայացնելով, թե կառավարության եւ եկեղեցու միջեւ իշխանական հակամարտությունը լիովին սրվել է մի երկրում՝ Հայաստանում, որ « 301 թվականին աշխարհում քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին կայսրությունն էր»: «Ուրբաթ օրը՝ օգոստոսի 7-ին Գարեգին Երկրորդը եւ 6 այլ եպիսկոպոսներ ներկայացան պետական դատարան, դատավորն ինքնաբացարկ հայտնեց, բայց դատավարությունը շարունակվելու է (նախատեսված է օգոստոսի 28-ին- Ան. Հ.), եպիսկոպոսներին սպառնում է մինչեւ 2 տարվա ազատազրկում», գրում է Բայերը: (Գերմանական «Դոյչլանդֆունկի» օգոստոսի 13-ի եթերում **Ինա Ռոթթշայդը** (Ina Rottscheidt) նշում է նաեւ մինչեւ 3 տարվա ազատազրկում:

Վերջինս եթերում պատմում է, որ ապրիլին եղել է Հայաստանում, այլ լրագրողների հետ մասնակցել կաթողիկոսի հետ հանդիպմանը-Ան.Հ.) «Թագեսփոստի» հոդվածագիրը շարունակում է՝ «առերեւույթ խնդիրը կաթողիկոսի հրաժարականը պահանջող Գեւորգ Սարոյանի պաշտոնից հեռացման հարցն է: Սարոյանը պաշտոնից հեռացման որոշման դեմ դատարան դիմեց, իր իրավունքը վերականգնեց, բայց եկեղեցու ղեկավարությունը նրան վերականգնելու փոխարեն կարգալույծ արեց:

⇨3

Թուրքիան՝ Իրան-ԱՄՆ հակամարտության «միջնո՞րդ»

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Իրան-ԱՄՆ հակամարտության էջը փակելու վճռականությամբ Թուրքիան դարձյալ առաջարկում է իր ծառայությունները:

Օգոստոսի 17-ին Թուրքիայի եւ Իրանի արտգործնախարարների կողմից Իրանի ու ԱՄՆ-ի միջեւ հրադադարի պահպանման հարցի շուրջ բանակցությունների վերջին զարգացումների քննարկումը պատահական չէր: Դրան նախորդել էր Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ լարվածության պայմաններում դիվանագիտական գործիքակազմն ամբողջությամբ օգտագործելու անհրաժեշտության եւ այդ հարցում Թուրքիայի ջանքերի արդյունավետության մասին Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** հայտարարությունը, որը տարածվել էր Թուրքիայի պաշտոնական կապուղիներով:

Թուրքական «Հուրիեթ» թերթն էլ «Եկեք հանդիպենք» վերնագրով հրապարակման մեջ անդրադարձել էր Էրդողանի եւ **Դոնալդ Թրամփի** հեռախոսազրույցին եւ փոխանցել Թուրքիայի նախագահի առաջարկը՝ Անկարայում երեք կողմերի ռազմական եւ անվտանգության փորձագետների մասնակցությամբ հանդիպում անցկացնելու վերաբերյալ:

Իրանի պաշտոնական թերթերն էլ տեղեկացնում են, որ Էրդողանը պատրաստակամություն է հայտնել հյուրընկալելու ԱՄՆ-ի եւ Իրանի նախագահներին: Նույն աղբյուրների համաձայն, առաջիկա օրերին Անկարա է այցելելու Իրանի ԱԳ նախարար **Աբբաս Արաղչին**:

Ինչ խոսք, Թուրքիան կարող է Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հանդես գալ որպես միջնորդ կամ, առնվազն, «դիվանագիտությանը նպաստող կողմ», սակայն դասական իմաստով չի կարող լիովին չեզոք միջնորդի դեր ստանձնել:

Անկարան այն սակավաթիվ երկրներից է, որը միաժամանակ բնականոն հարաբերություններ ունի թե՛ Թեհրանի, թե՛ Վաշինգտոնի հետ եւ լուրջ շահագրգռվածություն՝ թույլ չտալու հակամարտության հետագա սրումը:

Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է եւ ԱՄՆ-ի հետ ունի սերտ ռազմաքաղաքական ու անվտանգային հարաբերություններ: Միաժամանակ Իրանի հետ Թուրքիան ունի ցամաքային սահման, տնտեսական կապեր եւ շարունակական քաղաքական հաղորդակցության ուղիներ:

Այդ պատճառով Իրան-ԱՄՆ հակամարտության շարունակությունը Թուրքիայի համար մեծացնում է էսկալացիայի՝ իր սահմաններին տարածվելու, տնտեսական ապակայունացման, միգրացիոն հոսքերի, ինչպես նաեւ առեւտրի եւ էներգետիկայի ոլորտներում խափանումների վտանգը: Հետեւաբար, Անկարան ունի հստակ շահագրգռվածություն՝ ճգնաժամին վերջ տալու հարցում:

Լոնդոնում գործող հեղինակավոր վերլուծական կենտրոն Chatham House-ը, անդրադառնալով պատերազմը կանխելու հարցում Անկարայի շահագրգռվածությանը, ընդգծում է, որ Իրանի շուրջ պատերազմական իրավիճակը Թուրքիային կանգնեցրել է մի շարք լուրջ սպառնալիքների առջեւ:

Որպես դիվանագիտությանը նպաստող կողմ՝ Թուրքիան կարող է հաղորդագրություններ փոխանցել կողմերի միջեւ: Անկարայի հիմնական դերը կարող է լինել բանակցությունների սեղանին վերադառնալու համար նախնական պայմանավորվածությունների մշակումը: Այդ ուղղությամբ այսօր էլ փորձում են աշխատել Պակիստանն ու Քաթարը:

Սակայն խաղաղարար առաքելությանը մասնակցելու հարցում Թուրքիայի համար կան լուրջ խոչընդոտներ:

Իրանը կարող է Թուրքիային լիովին չընկալել որպես չեզոք կողմ, քանի որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է եւ ԱՄՆ-ի հետ ունի լայնածավալ ռազմական ու անվտանգային հարաբերություններ: Մյուս կողմից, Վաշինգտոնը նույնպես կարող է չվստահել Անկարային՝ Թեհրանի եւ Մոսկվայի հետ նրա ռազմավարական մերձեցումների պատճառով: Հետեւաբար, երկու կողմերն էլ կարող են մտահոգվել, որ Թուրքիան Թեհրանի եւ Վաշինգտոնի փոխանցած հաղորդագրությունների կամ տեղեկատվության մի մասը կարող է մեկնաբանել սեփական շահերի տեսանկյունից:

Բացի այդ, Անկարան միայն չի ձգտում լուծել Իրանի եւ ԱՄՆ-ի տարաձայնությունները, այլ ցանկանում է պահպանել եւ ամրապնդել իր դիրքերը որպես տարածաշրջանային տերություն: Որոշ վերլուծաբաններ նույնիսկ պնդում են, որ Թուրքիան փորձում է առկա ճգնաժամն օգտագործել իր աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու համար:

Այս հանգամանքը կարող է թե՛ Թեհրանի, թե՛ Վաշինգտոնի տեսանկյունից կասկածի տակ դնել Թուրքիայի չեզոքությունը:

Սակայն ամենակարեւոր խոչընդոտներից մեկը Անկարա-Թել Ավիվ հարաբերություններն են: Էրդողանի եւ Իսրայելի միջեւ սուր տարաձայնությունների պատճառով Վաշինգտոնը երբեմն զգուշավորությամբ է վերաբերվում Անկարայի տարածաշրջանային դիրքորոշումներին:

Միեւնույն ժամանակ, Իրանը կարող է ակնկալել, որ Թուրքիան Իսրայելի նկատմամբ այնպիսի դիրքորոշում կորդեգրի, որը կհամապատասխանի Թեհրանի պահանջներին: Իսկ դա, ամենայն հավանականությամբ, անընդունելի կլինի ԱՄՆ-ի համար:

Թուրքիայի խաղաղարար առաքելությունը կաշկանդող գործոններից մեկն էլ միջնորդների թվի աճն է: Պակիստանը, Քաթարը, Օմանը եւ նույնիսկ եվրոպական որոշ երկրներ նույնպես փորձում են հակամարտող կողմերի միջեւ երկխոսության ուղիներ ստեղծել:

Մի կողմից՝ սա կարելի է դրական համարել, քանի որ Թեհրանի ու Վաշինգտոնի միջեւ ավելի շատ կապուղիներ են ստեղծվում: Սակայն մյուս կողմից՝ հնարավոր է Թեհրանին եւ Վաշինգտոնին փոխանցվեն հակասական ու իրարամերժ հաղորդագրություններ:

Վերը շարադրվածից ելնելով՝ ներկայիս պայմաններում Թուրքիան ավելի շուտ կարող է հանդես գալ որպես «դիվանագիտությանը նպաստող կողմ», քան որպես հակամարտության կարգավորմանն աջակցող չեզոք միջնորդ:

Թերեւս հենց այս հանգամանքներն են այն պատճառները, որոնք թույլ չեն տվել Իրան-ԱՄՆ հակամարտության կարգավորման համար բազմիցս առաջարկություններով հանդես եկած Թուրքիային իր միջնորդական նախաձեռնությունների ոչ այնքան հարուստ պատմության մեջ արձանագրել նույնիսկ մասնակի հաջողություն:

Հիշենք, թեկուզ, Իրանի միջուկային հարցի կարգավորման շուրջ Թուրքիայի «ձեռքբերումները»: Թուրքիան երկար ժամանակ փորձել է միջնորդի դեր ստանձնել Իրանի միջուկային խնդրի շուրջ երկխոսության մեջ: Սակայն այստեղ Անկարայի ազդեցությունը սահմանափակ է եղել, քանի որ հիմնական որոշումները կախված են եղել Իրանից, ԱՄՆ-ից եւ եվրոպական տերություններից:

Այսինքն՝ Իրանի հարցը Թուրքիայի համար նոր թեմա չէ: Սակայն այս անգամ եւս Անկարայի հավակնությունները՝ հանդես գալու որպես միջնորդ, բախվում են նույն հիմնական խնդրին՝ Թուրքիան կարող է լինել կարեւոր հաղորդակցող եւ դիվանագիտական գործընթացներին նպաստող երկիր, բայց դժվար թե ընկալվի որպես լիովին չեզոք միջնորդ:

Խազար, թե՞ Կասպից

Ինչպե՞ս կկոչվի Իրանի նոր նահանգը

Վերջին շրջանում Իրանում քննարկվում է **Կասպից** ծովի ափին՝ **Մազանդարան, Գիլան** եւ **Գոլեսթան** նահանգների վերածեւավորման հաշվին նոր նահանգ ստեղծելու հարցը: Դրա համար ընտրված ամենամրցունակ անվանումը, ըստ շրջանառվող տեղեկությունների, **«Խազար»-**ն է: Թե որքանո՞վ է «Խազար» բառն ընդունելի իրանցիների համար, կիմանանք քիչ անց:

Ի դեպ, Իրանի հյուսիսային ափամերձ նահանգներին հարող Կասպից ծովը, որի հայկական անվանումը «**Վրկանա ծով**» է, այդ ջրային ավազանի արձանագրված ամենահին անվանումն է: Ծովի «Վրկանա» անվանումը գործածվել է դեռեւս Աքեմենյանների եւ Արշակունիների ժամանակաշրջաններում:

Մեզ հայտնի է, որ ադրբեջանցիները, որպես տեղանունները յուրացնելու հարցում մեծ փորձ կուտակած ժողովուրդ, պետք է փորձեին Կասպից ծովի անվան համար կառչել «Խազար» բառից, որը ծագում է խազարական թյուրքական ցեղախմբերի անունից:

Պատահական չէ, որ ԻԻՀ նախագահ **Մոհամմադ Խաթամիի** հյուրընկալությամբ Թեհրանում գտնվող Ադրբեջանի նախագահ **Հեյդար Ալիեւը** դեռեւս 2002 թվականի մայիսին, համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ լսելով «Մազանդարանի ծով» անվանումը, ընդգծված եւ կտրուկ տոնով իր դժգոհությունն արտահայտեց ու ջրային ավազանն առաջարկեց կոչել միայն «**Խազարի ծով**»՝ Xezer denizi:

Ի դեպ, «Խազար» բառը, որն ասոցացվում է օղուզական-թյուրքական եւ հրեական էթնիկ բնորոշումների հետ, համարվում է Ադրբեջանի Հանրապետությունում տարածված եւ նախընտրելի անուն:

Այդ անվանումն այնքան է տարածված Ադրբեջանում, որ նույնիսկ Թուրքիայի քաղաքականությունը գովազդող Բաքվի հեռուստատեսային ցանցերից մեկը կոչվում է **«Xezer TV»**: Նույն մեդիա կառույցի շրջանակում, որպես համազգային ռադիոհեռարձակող, գործում է նաեւ «**Xezer FM**» ռադիոն:

Բաքվում «Խազար» անվամբ գործում են նաեւ բարձրագույն ուսումնական հաստատություն եւ գիտահետազոտական կենտրոն: Էլ չենք խոսում Խազար անվանն արժանացած Ադրբեջանի շրջաններից մեկի մասին:

Հեյդար Ալիեւի դժգոհ արձագանքից կարճ ժամանակ անց ԻԻՀ նախագահ Խաթամիի առաջին տեղակալի կողմից պետական մարմիններին ուղարկված շրջաբերականով բոլոր կառույցներին պարտադրվեց այլ անվանումների փոխարեն օգտագործել միայն «**Խազարի ծով**» անվանումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խազար» բառը կապ չունի Իրանի քաղաքակրթական, պատմական, կրոնական եւ այլ մոտեցումների հետ՝ պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է ընդունվելու այդ որոշումը (եթե, իհարկե, այդպիսի որոշում կայացվի): Իսկ նկատի ունենալով այս բառի մեջ առկա հակահիրանական թյուրքական-հրեական էթնիկ շեշտադրումը՝ հարց է առաջանում՝ ինչո՞ւ մինչեւ այժմ այդ մոտեցումը շրջանառությունից դուրս չի եկել:

Նկատենք, որ VIII-IX դարերում խազարների իշխող վերնախավը հուդայականություն է ընդունել, եւ IX դարի աղբյուրներն արդեն խոսում են խազարական արքունիքի ու որոշ ազնվականների՝ հուդայականություն ընդունելու մասին:

Եթե Իրանի հյուսիսային շրջաններում նոր նահանգ ձեւավորելու մասին որոշում կայացվի, ապա ինչո՞ւ պիտի այն կոչվի ադրբեջանցիների, տվյալ դեպքում՝ Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիեւի՝ քառորդ դար առաջ հնչեցրած առաջարկով:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Եկեղեցու եւ կառավարության պայքարը անխուսափելիորեն թուլացնելու է երկու կողմին էլ՝ վնասելով նրանց հեղինակությանը, խորացնելով երկրի պառակտումը»

⇨1 Միակ դեպքը չէ. մոտ 150 հոգեւորականի, նրանց թվում՝ 3 եպիսկոպոսի գործունեությունը եկեղեցու ղեկավարությունը կասեցրել է, հոգեւորականները աշխարհիկացվել են՝ Գարեգին Երկրորդի քաղաքական ուղեգիծը քննադատելու համար: Չկա եկեղեցու ներքին հարցերի վերաքննիչ անկախ մարմին կամ եկեղեցական դատարան: Բայց արդյոք դա արդարացնու՞մ է եկեղեցու ներքին գործերին պետության միջամտությունը: Կարո՞ղ են քաղաքական գործիչներն ու դատավորները որոշել, թե ով է արժանի կամ անարժան քահանայի կամ եպիսկոպոսի պաշտոնին: Կաթողիկոսը խոսում է «ապօրեն եւ հորինածին մեղադրանքների», նույնիսկ ՀՀ-ում եկեղեցու դեմ հալածանքների մասին», գրում է «Թագեսփոստի» հեղինակը եւ մեկնաբանում՝« Սրանք լուրջ մեղադրանքներ են, հատկապես այն պատճառով, որ Հայ առաքելական եկեղեցին դարեր ի վեր եղել է հայ ինքնության պահապանը: Երբեմնի հայոց մեծ թագավորությունը զոհ է դարձել իր առավել հզոր հարեւաններին, մինչդեռ եկեղեցին պահպանել է հայոց մշակութային ժառանգությունն ու ինքնությունը՝ նույնիսկ օսմանյան, ավելի ուշ՝ խորհրդային լծի տակ», գրում է Բայերը եւ պարզաբանում. «Սակայն այժմ եկեղեցին բախվում է ՀՀ կառավարության թշնամանքին, ինչը կաթողիկոսին դրդում է գործածել «հալածանք» բառը: Կառավարությունը նրան մեղադրում է անբարո կյանքի, Պուտինի Ռուսաստանի հետ համագործակցության եւ եկեղեցում բռնապետական ղեկավարման կարգ որդեգրելու մեջ: Ավելին՝ կառավարությունը կամենում է բարեփոխել եւ արդիականացնել եկեղեցին, դրա համար արդեն մի քանի եպիսկոպոսի եւ քահանայի իր կողմն է շահել: Կառավարությունը սահմանված լիազորությունները գերազանցու՞մ է», հարցնում է Բայերը եւ ինքն էլ պատասխանում՝ «անկասկած»:

Հոդվածագիրը «Խոսքը Հայաստանի գոյատեւման մասին է» ենթավերնագրով շեշտված հատվածում այսպիսի հարցադրում է անում՝ իսկ «եկեղեցին գերազանցու՞մ է իր լիազորությունները, երբ եպիսկոպոսները կառավարության տապալումը պահանջող շարժման առաջնագծում են: Խելամի՞տ է, տեղի՞ն է, որ կաթողիկոսը եւ նրա վստահելիները բացահայտ աջակցեն ընդդիմությանը, կառավարությանը մեղադրեն ԼՂ-ից (Բայերը փակագծում ավելացնում է՝ Արցախ-Ան. Հ.) արտաքսված հայերին դավաճանելու մեջ եւ արտաքին քաղաքական այլընտրանք առաջարկեն:

Այս հակամարտությունը շատ է հիշեցնում միջնադարյան Եւրոպայում ինվեստիտուրայի (կամ՝ կանոնադրական) պայքարը, որ կայսրերը մղում էին Հռոմի պապի դեմ: Դա ոչ թե սկզբունքներին, այլ սահմաններին վերաբերող վեճ էր՝ կայսեր եւ պապի իշխանությանը քրիստոնյա արեւմուտքում: Այսօրվա Հայաստանն աշխարհիկ երկիր է, խորհրդային ժամանակներից՝ նաեւ հոգեւորի ամայացած կնիքով: Փոքր է, ավելին՝շրջապատված է թշնամական տրամադրված դրացիներով: Եկեղեցու եւ կառավարության միջեւ իշխանական պայքարը անխուսափելիորեն թուլացնելու է երկու կողմին էլ, վնասելով նրանց հեղինակությանը, խորացնելով երկրի պառակտումը: Սա՛ոչ Փաշինյանի, ո՛չ էլ եկեղեցու շահերից է բխում, քանի որ թույլ եւ բաժանված Հայաստանն անպաշտպան կլինի բազմաթիվ թշնամիների դեմ: Սա կանոնադրական վեճից տարբեր է՝ քաղաքականության եւ կրոնի միջեւ սահմանների փոխարկման մասին չէ, այլ՝ վտանգված հայկական ինքնության պահպանությունն առաքելություն դարձած միակ պետության գոյատեւման մասին է խոսքը», հոդվածը եզրափակում է Շտեֆան Բայերը:

Լուսանկարը՝ «Թագեսփոստի»: Առաջին լուսանկարում հոդվածագիր Շտեֆան Բայերն է:

«Հոդվածում տեղ գտած այն պնդումը, թե մոտ 150 հոգեւորական (այդ թվում՝ երեք եպիսկոպոս) հեռացվել կամ կարգալույծ է արվել «Գարեգին Երկրորդի ուղեգիծը քննադատելու պատճառով», հակասում է փաստերին եւ պետք է հստակորեն մերժվի» նկատել տվեց Բադեն Վյուրթեմբերգի հայ համայնքի հոգեւոր հովիվ **Տիրատուր քահանա Սարդարյանը**, երբ հարցրինք՝ ճի՞շտ է վերոհիշյալ թիվը, համապատասխանո՞ւմ է իրականությանը: Սարդարյանը հստակեցրեց, թե «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 2026 թվականի հունվարին պաշտոնական տվյալներ է հրապարակել. Գարեգին Բ կաթողիկոսի գահակալության 26 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ կարգալույծ է արվել 101 հոգեւորական: Նրանցից 38-ը կամավոր հրաժարվել է հոգեւոր ծառայությունից, 27-ը ինքնակամ լքել է ծառայության վայրը, 15-ը հեռացվել է թեմական առաջնորդների միջնորդությամբ, եւ միայն 21-ը՝ անմիջապես կաթողիկոսի կողմից: Միեւնույն ժամանակ ձեռնադրվել է 491 հոգեւորական: Բացի այդ, վճռորոշ է նաեւ ընթացակարգը. 2011 թվականից Ամենայն հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ գործում է կարգապահական հանձնաժողով, որը քննում է նման դեպքերը: Կաթողիկոսը ստորագրում կամ հաստատում է որոշումը եւ կատարում համապատասխան տնօրինությունը՝ հիմնվելով հանձնաժողովի որոշման վրա: Նա միանձնյա կամայական որոշումներ չի կայացնում: Հետեւաբար, գոյություն չունի զուտ «անձնական թելադրանք» (դիկտատ): 150 թիվը եւ դրդապատճառների համընդհանուր վերագրումը, թե դա եղել է «միայն քննադատության պատճառով», ծագում են քաղաքականապես երանգավորված ներկայացումից եւ չեն դիմանում եկեղեցական վիճակագրության ու կանոնական ընթացակարգի քննությանը», պարզաբանում է Տիրատուր քահանա Սարդարյանը:

Ձեւի եւ բովանդակության անտրամաբանությունը

⇨1 Ընդդիմությանը զիջվի՞ սեփական ծրագրի իրագործման բյուջեն վերահսկող հանձնաժողովի նախագահությունը, տնտեսական հանձնաժողովը մի կերպ էլի կարելի է հասկանալ: Ու երբ հարցնես, թե ի՞նչ կա դրա տակ, երբ առանցքային հանձնաժողովների ղեկավարությունն է զիջվում ընդդիմությանը, իշխող ուժը հո ժողովրդավարության հանդեպ ինքնամոռաց սիրուց չի՞ գժվել, որ ինքն իր սայլի անիվին սեպ խրի ու իր նախագծած բյուջեի կատարմանը, իր ընտրած եվրաինտեգրման ուղուն խոչընդոտի՝բարդացնելով տվյալ հանձնաժողովներում հարցերի քննարկման եւ ընդունման ընթացքը: Ու այդ վերաբերմամբ հարցին իշխանականները քեզ պատասխանեն, թե մենք ի՞նչ անենք, այդ հանձնաժողովների նախագահների պաշտոններն են ընտրել ընդդիմադիրները Դոնթի բանաձեւով:

Բա ես իրավունք չունե՞մ այդ դեպքում դավադրապաշտական տեսություններ զարգացնեմ, որ լավ էլ պայմանավորվել եք այս ծանր ժամանակներում, երբ կարեւոր հարցերը միայնակ որոշելու սահմանադրական մեծամասնություն չունի իշխող ուժը, երբ երկրի հանդեպ պատժամիջոցներ կան՝ իրար վրա գցելու հնարավոր ձախողումների մեղադրանքը, հնարներ ունենալով համ արտաքին պահանջողներից խաբս տալու, համ հնարավոր տնտեսական վատթարացումների դեպքում հանրության առաջ արդարանալու: Որ երբ ասեն՝ բա ինչո՞ւ ՀԱՊԿ-ից, ԵԱՏՄ-ից դուրս չեք գալիս, դա խոչընդոտում է եվրոպական շուկային ինտեգրմանը, ասեք՝ մենք մեղավոր չենք, ընդդիմությունն է խոչընդոտում այդպիսի քայլին: Իսկ երբ ասեն՝ ԵԱՏՄ եւ եվրոպական շուկաներում միաժամանակ գտնվելը հնարավոր չէ՝կողմնորոշվեք վերջապես, հանրաքվե անցկացրեք, դուք եվրասիական հանձնաժողովի մակարդակով ասեք՝ ոչ: Հնարամտության համար՝100 , ածպարարության համար՝0:

Դե իսկ մարդու իրավունքներով էլ թող գնա անկյուն քշված ընդդիմադիր կտորի ներկայացուցիչը զբաղվի, թող որքան կուզեն ամեղության կանխավարկածի հարց բարձրացնեն, խոսեն-խոսեն-խոսեն Արեգնազ Մանուկյանի, Ավետիք Չալաբյանի, Արթուր Սարգսյանի եւ մյուսների անմեղության կանխավարկածից, բա ժողովրդավարական երկիր է:

Իսկ եթե ավելի լուրջ՝ այդ ո՞նց է, որ բարեկրթության, ԱԺ ընդդիմադիր փոխխոսնակի ընտրության վերաբերյալ պայմանավորվում եք, մյուս հարցերում՝ չէ՞, մարդու հավատը ինչ-որ չի գալիս:

Պայմանավորված կլինեք, չնայած մյուս տարբերակը, որ Եվրահինտեգրման հանձնաժողովի արդեն նախկին նախագահ Արման Եղոյանն է ասում, թե «Ուժեղ Հայաստանն» ուզում է տորպեդահարել եվրոպական ինտեգրման գործընթացը հենց այս գլխից, դա էլ բացառել հնարավոր չէ, նույն տրամաբանությամբ եվրասիական ինտեգրումն էլ տորպեդահարելու է ՔՊ-ն, ու ավելի լավ կլինի հենց սկզբից այդ հանձնաժողովների անվան մեջ «չ» տառն ավելացնել ու դարձնել չինտեգրման, գուցե այդ պատճառով են հարմար փորձ չունեցող թեկնածուները:

Էլ չասած, որ մյուս հանձնաժողովները եւս սուպեր պրոֆեսիոնալներով չեն փայլել ոչ անցյալում, ոչ հիմա՝ որքան հանձնաժողովի մանագիտական պրոֆիլից հեռու լինի թեկնածուն-այնքան լավ: Լրագրողի մասնագիտության կառավարման եւ օրենսդրական հաջողակությունը մատնանշեմ՝ հերիք է, կհասկանաք վիճակը, մերոնք կառավարական պաշտոններից հետո հաջողությամբ յուրացրել ու յուրացնում են օրենսդիր պաշտոնները՝ նոր ԱԺ-ում միայն քանից ավելի նախկինում լրագրողական գործունեություն ծավալած պատգամավոր կա, բա՛:

Հա դե՝ դեղագործն էլ կարող է պաշտպանության ոլորտ համակարգել, հաղորդավարն՝ առողջապահության, լրագրողը՝ կրթության կամ արտաքին հարաբերությունների, եւ այլն: Առհասարակ՝ մեր ինչի՞ն են պետք իրավաբաններն ու տնտեսագետները, մյուս մասնագիտությունները, բոլոր լրագրողներին սարքեք պատգամավոր ու պրծեք: Ընդդիմադիրներն ու իշխանականներն այս հարցում իրարից սովորողի դերում են:

Քանի որ նույնիսկ այս նոր ԱԺ-ում «Ազգ» թերթից դեռեւս մեջբերումներ են անում, որպես ամենաարժանահավատ աղբյուրից, պատմության համար մի անգամ էլ արձանագրենք կայքերով լայնորեն լուսաբանվածը՝ ԱԺ 9-րդ գումարման մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների պաշտոնում առաջադրվել են իշխող «Քաղաքացիական պայմանագրից» Արուսյակ Ջուլհակյանը (Պետահիրավական հանձնաժողով), Վիլեն Գաբրիելյանը (Պաշտպանության եւ անվտանգության), Բաբկեն Թունյանը (Տնտեսական), Լուսինե Բաղալյանը (Առողջապահության), Նազելի Բաղդասարյանը (Աշխատանքի,սոցիալական եւ բարեկեցության), Սիսակ Գաբրիելյանը (ԿԳՄՍ եւ սպորտի), Սարգիս Խանդանյանը (Արտաքին հարաբերությունների), Տաճատ Սարգսյանը (Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման):

Դոնթի բանաձեւով «Ուժեղ Հայաստանի» թեկնածուներն են Արեգա Հովսեփյանը (Եվրոպական ինտեգրման), Հայկ Ֆարմանյանը (Ֆինանսավարկային եւ բյուջետային), Դավիթ Ղազինյանը (Տարածքային կառավարման, ՏԻՄ, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի):

Դոնթի բանաձեւով «Հայաստան» խմբակցությունը եւս թեկնածու է առաջադրել, Մարդու իրավունքների եւ հանրային հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար առաջադրվել է Լիլիթ Գալստյանը: Վերջինս ամենափորձառու խորհրդարանականներից է, ու թեեւ նրա թեկնածության քննարկումն անցավ իշխող ուժի ներկայացուցիչների քննադատության տարափի ներքո, բայց համարում ենք, որ նա ընտրվելու շանս ունի: Մի բան, որ չի կարելի պնդել ընդդիմադիր մյուս թեկնածուներից Արեգա Հովսեփյանի, Հայկ Ֆարմանյանի մասին, որոնց նույնպես իշխանականներն ակտիվ քննադատում էին, ելույթներում եւ դիմակա հարցերում իրենց անբավականությունը ցուցադրում նրանց թեկնածության վերաբերյալ: Դավիթ Ղազինյանի ընտրությունը միգուցե հնարավոր կլիներ, բայց վերջին միջադեպը նրա եւ ԱԺ փոխնախագահ ընտրված Վահագն Ալեքսանյանի միջեւ (մյուս փոխնախագահներն են Հայկ Կոնջորյանը, Արամ Վարդեւանյանը), թեական է դարձնում մեծամասնության կողմից նրան տրվելիք ձայների հնարավորությունը: Չնայած միջադեպից մի օր հետո եւ քվեարկությունից մի պահ առաջ ե՛ւ Վահագն Ալեքսանյանը, ե՛ւ Դավիթ Ղազինյան կարծես իրենց անզիջում պահվածքից հետ նահանջեցին:

Ամբողջական հրապարակումը, azg.am կայքում

«Ամեն վայրկյան մեզ խաչում ենք մի լավ բան, որ բարիք կարող էր բերել». *Հարություն Թոփիկյանի ծննդյան 75-ամյակը նշվեց երգչախմբային համերգով*

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երեւանի պետական կամերային երգչախմբի համերգն սկսվեց ճանաչված խմբավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Հարություն Թոփիկյանի** թեւավոր խոսքերով, որ հնչեցին էկրանից՝ իր կենդանի ձայնով: Այդ համառոտ մտքերով, ասես, ամփոփվում էին իր համոզմունքները, հավատամքը, մարդկանց, աշխարհի եւ Աստծո հանդեպ իր վերաբերմունքը, եւ ամենում գերակայում էին սերը, հավատարմությունը, լավատեսությունը: Դրանք իր մտածումներն էին կյանքի, աստվածայինի, կյանքում իր կոչման մասին: Տպավորվեց հատկապես իր մի միտքը. կյանքի հանդեպ իր մոտեցման մասին էր այս ձեւակերպումը, որ հնչեց՝ որպես հավատամք: Ափսոսանք կար նրա խոսքում, երբ ասում էր. **«Ամեն վայրկյան, ցավոք, մենք խաչում ենք մի լավ բան, որ բարիք կարող էր բերել»**: Իր ստեղծագործական ճանապարհը մեծապես կապված էր եղել հոգեւոր երաժշտության հետ. ղեկավարել էր եկեղեցական տարբեր երգչախմբեր, եւ հավանաբար իր շնորհն էր համոզիչ հանգամանքը եղել, որ Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսական հովանավորությամբ նախորդ դարի 90-ական թվականների կեսերին հիմնել էր Երեւանի կամերային երգչախումբը: Առիթը կոմիտասյան բոլոր խմբերգերը կատարելն ու ձայնագրելն էր, ինչն էլ հաջողությամբ իրագործեց, եւ սա էլ խմբի հետագա տասնամյակների անընդմեջ ստեղծագործական ուղու սկիզբը դարձավ: Այդ մասին էր երաժշտագետ **Օլյա Նուրիջանյանի** վերլուծական խոսքը, որում մինչ բուն համերգը սկսվելը բավական հանգամանալից ներկայացվեց խմբավարի կյանքն ու ստեղծագործական անցած ուղին. «Հ. Թոփիկյանի գործունեությունը բեւեռների եւ անհավանական խաչմերուկները միավորելու մի գեղեցիկ օրինակ էր: Նրա անցած ճանապարհը հոգեւորն ու աշխարհիկը, պրոֆեսիոնալն ու ժողովրդականը, սիրողականն ու երաժշտական կրթության ուղիները, երաժշտության ամենատարբեր ուղղությունները՝ ակադեմիական, ջազ, ժողովրդական,- այս ամենը միավորելու տաղանդ ունեցող մարդու կենսագրություն է»:

Երեւանի պետական կամերային երգչախմբի հիմնադիր խմբավարի անժամանակ մահից հետո երգչախմբի գեղարվեստական խմբավարությունը վստահվել է **Քրիստինա Ոսկանյանին**: Վերջինիս ղեկավարությամբ երգչախումբը, պահպանելով թոփիկյանական մտածողության եւ խմբավարական արվեստի ավանդույթները, հանդես է գալիս նոր, թարմ ծրագրերով՝ մշտապես ընդլանելով իր երկացանկը նոր երաժշտական երկերով: 2026 թ. ամառնամիջի համերգի ծրագիրը կազմված էր Հ. Թոփիկյանի ամենից սիրած երկերի ընտրանուց, եւ համերգային երեկոն (ինչը ենթադրելի էր եւ հանդիսականի կողմից՝ ակնկալվող) մեկնարկեց կոմիտասյան երգերի մի սիրուն փնջանքով:

Համերգի հետագա ընթացքին հնչեցին **Էդգար Հովհաննիսյանի**, **Մարտին Վարդազարյանի**, **Երվանդ Երկանյանի** եւ **Տիգրան Մանսուրյանի** խմբերգերը: Էդ. Հովհաննիսյանի ստեղծագործություններից, հիմնականում, ընտրված էին ժողովրդական երգերի հենքի վրա ստեղծված երաժշտական հոգեզմայլ կառույցներ: Մ. Վարդազարանի **«Մագաղաթները»** հայոց գրին ու գրչությանը երաժշտական ընծայում է, որը թերեւս, Երեւանի «Մատենադարանի» ոչ պաշտոնական հիմներգը պետք է համարել: Մյուս հեղինակների երկերը հայ պոեզիայի երաժշտական անկրկնելի ընթերցումներ էին:

Ընտրվել էր Երվանդ Երկանյանի ստեղծագործության գոհարներից մեկը՝ **«Նավզիկեն»**: Կատարյալ կառույցով եւ հնչողությամբ, կոմպոզիցիոն անթերի, մեղեդիական անկրկնելի հնարանքով այս փոքրածավալ երաժշտական երկն իր խորքայնությամբ, զգացմունքի եւ մտքի միահյուս պարփակումով, գեղեցկությամբ կարող է մրցել շատ ու շատ մեծածավալ ստեղծագործությունների հետ: Չարենցյան տողի զորությանը համահավասար երաժշտական մարմնավորումը, առանց չափազանցության, Երվանդ Երկանյանի ստեղծած գոհարեղեն ոգորումներից մեկն է:

«Նայադների՛ նման, նայադների՛ նման,
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք
Եվ թողնելով մորմոք ու կորստի կսկիծ:
Մանկությունից անդարձ՝ իմ օրերում անցած,
Տարիներիս կարմիր ավազի մեջ,
Ինձ թվացել է միշտ, որ կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...»:

Մաեստրո Ե. Երկանյանը, ի հիշատակ իր ընկերոջ եւ համագործակցի, համերգի նախօրեին այս գրառումն էր արել. «Այսօր մենք ընկերներով պիտի հավաքվեինք՝ նշելու իր 75-ամյակը: Նա առույգ էր, աշխույժ, մշտապես լծված իր սիրած գործին, շրջապատված հարազատ մարդկանցով, շարունակ մտածում էր նոր անելիքների մասին... Իրեն խնայել չգիտեր: Բայց եկավ անսպասելին... Դառնաղետ «քովիդի» առաջին զոհերից եղավ տակավին 70-ը չբոլորած Մաեստրոն, գործի թունդ պահին, երբ ինքը պատնեշի վրա էր, զբաղված իր նոր ձայնագրություններով: Այդ ձայնագրություններն էլ կհավերժացնեն իր անունը՝ որպես իր ժամանակի խոշոր արվեստագետի, երբ մենք էլ այլեւս չենք լինի, որպեսզի հիշենք ու պատմենք իր մասին: Այդ մասին գալիք սերունդներին կպատմեն եւ կհիշեցնեն իր թողած գործերը, թե ո՛վ է եղել Կոմիտասի եւ Կանաչյանի ամբողջական գործերի առաջին կատարող եւ ձայնագրող, հայ կոմպոզիտորների բազմաթիվ նոր գործերի ոգեշնչող ու մեկնաբանը՝ Հարություն Թոփիկյանը»:

Համերգն ամփոփվեց Տ. Մանսուրյանի **Ars Poetica** տասմասանի ստեղծագործության մի քանի խմբերգերի կատարումով:

Աղունն այսօր կա՞

Հայ գրականության մեջ կանացի կերպարները քիչ չեն, բայց քչերն են, որ դառնում են սերնդային հիշողության մաս: Այդ քիչ, դասական օրինակներից է Մաթեւոսյանի Աղունը, որն, ի դեպ, հեղինակի մոր գրական կերպարն է:

Երբ առաջին անգամ կարդացի «Աշնան արեւը», միանգամից մորս նմանեցրի: «Մամ, դու Աղունն ես»,- ասացի մորս հերթական ճաշի ժամանակ, հայրս էլ կատակեց՝ թե ես էլ ուրեմն Սիմո՞նն եմ: Հայրս հաստատ Սիմոն չէ. ոտքերի տակ կոշտ հող ունի, բայց նրա՝ նվիրական զգացումները հարազատների հանդեպ նույնն են, ինչ Սիմոնինը: Դա մորս հունից հանում է: Եվ ցանկացած կնոջ, եթե կուզեք իմանալ, որովհետեւ «ցանկացած հաջողակ տղամարդու հետեւում կանգնած է սեփական կինը», ոչ թե մայրը, եղբայրը կամ էլ քույրը:

Մայրս իսկական Աղուն է՝ տուն ու տեղ դնող: Ճիշտ է՝ ի տարբերություն Աղունի, նա սեփական տունը ստեղծել է ոչ թե գոմից, այլ պարզապես ուրիշի տնից, որտեղ նույնիսկ վարձով չէինք ապրում: Դե, կասեք՝ ո՞ր հայ մայրը չէ այդպիսին՝ ստեղծող, արարող: Անրի Վերնոյի «Մայրիկը» հրաժարվում էր տորթի իր բաժնից եւ հայտարարում, թե չի սիրում քաղցր, միայն նրա համար, որ ընտանիքի մյուս անդամները ուտեին համեղ անուշեղը՝ առանց մեղքի զգացումի: Այսօր, հատկապես կեսկատակ-կեսլուրջ, համացանցում տարածվում են հոլովակներ, որտեղ մայրիկը թաքուն կոնֆետ է ուտում կամ քաղցրեղենի հատուկ «պահեստ» ունի՝ երեխաների աչքից հեռու: Պիտի առաջինը ինքդ քեզ գնահատես, որ ուրիշն էլ քեզ գնահատի, նույնիսկ եթե այդ «ուրիշը» քո երեխան է:

Կարեն Չանիբեկյանը, որը նույնանուն ֆիլմի երկրորդ գլխավոր հերոսն էր՝ Սիմոնը, առիթ է ունեցել հենց Մաթեւոսյանի ծննդավայրում՝ Ահնիձորում, ծանոթանալու Մաթեւոսյանի մոր հետ: Հին հարցազրույցներից մեկում նա ասել է «...էդ կնոջ մեջ ե՛ւ ջիգյար կար, ե՛ւ հումոր կար, ե՛ւ տաքություն կար, ե՛ւ կռիվ կար, ամեն ինչ կար...»: Մեր տատիկ-մայրիկների սերունդների մեջ «Աղուն» շատ կա: Խորը նայելով, լսելով, զրուցելով՝ այդ կանանց մեջ կա ե՛ւ կռիվը, ե՛ւ հումորը, ե՛ւ ջերմությունը, ե՛ւ այդ ամեն ինչը:

Իսկ հիմա՞ «Աղուն» կա: «Բայց, - կասեն շատերը, - Աղունն այնպիսի կերպար չէ, որին նմանվելը երազանք է. հակառակը՝ լավ է, որ Աղունի ժամանակն ավարտվի»: Զարմանալի չէ, որ Աղունը շատերի համար չար է, բողոքական, չհասկացված, իսկ նա պիտի լիներ:

Տարիների ընթացքում հասկացա, որ Աղունը հավաքական կնոջ կերպար է՝ ծնված այն ժամանակի համար, երբ դեռ չկային նորաոճ տերմիններն ու սահմանումները: Երբ կանացի խայթոցներն եւ քննադատությունները դառնում էին տղամարդ-կին հարաբերությունների մի մասը: Երբ կանանց խոսքը հաճախ ավելի կտրուկ էր, ուժեղ ու սուր, քան տղամարդու բառունցը: Աղունն այդ ածելի կանանցից էր, որը իմաստուն էր այնքան, որ կարող էր խոսել:

Եթե այսօր ապրեր Աղունը, միգուցե բաժանվեր Սիմոնից: Կասեք՝ նա դեռ այն ժամանակ էլ էր պատրաստ Սիմոնից բաժանվելու, սակայն անկախ ամեն ինչից՝ Աղունը իր աշխարհում էր գտնվում: Աշխարհ, որտեղ նա նվիրված էր իր ստեղծած տանը, որդիներին, հարսին ու անգամ խեղճ Սիմոնին, որի հոգին հանում էր: Եթե Աղունն այսօր լիներ, ժամանակակից թրենդներն ու երկակի ստանդարտները պարզապես կանցնեին նրա կողքով:

Հարցը միայն մեկն է. մեր երեխաները, եթե կարդան «Աշնան արեւը», մեզ կճանաչե՞ն այնտեղ:

ԱՆՆԱ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԵՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Տակահիրո Ակիբա.
Կոմիտասով բաբախող ճապոնական սիրտը

ԵՐԵՎԱՆ-ՆԱԳԱՆՈ, Ճապոնիա *- Ճապոնացի դաշնակահար* ***Տակահիրո Ակիբան*** *(ծնվ. 1984, Յոկոհամա) հայկական եւ ռուսական դասական երաժշտության առաջատար մեկնաբաններից է Ճապոնիայում: Գերազանցությամբ ավարտել է Տոկիոյի արվեստների համալսարանի դաշնամուրի բաժինը, ստացել երաժշտական արվեստների դոկտորի աստիճան՝ իր հետազոտությունը նվիրելով ռուս ականավոր դաշնակահար եւ կոմպոզիտոր Սամուիլ Ֆեյնբերգին: Ուսանել է նաեւ Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում՝ պրոֆեսոր Միխայիլ Օլենեւի ղեկավարությամբ, կատարելագործվել Վիկտոր Բունինի եւ Անահիտ Ներսիսյանի մոտ:*

2013 թվականին Գերմանիայում կայացած Կոմիտասի անվան երաժշտական երկրորդ միջազգային մրցույթում Ակիբան արժանացել է առաջին մրցանակին: Հայ երաժշտության տարածման գործում ունեցած բացառիկ ավանդի համար 2015 թվականին պարգեւատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության, իսկ 2021-ին՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ոսկե մեդալներով:

Հայ մշակույթի հանդեպ խոր նվիրվածությունից մղված՝ Ակիբան հիմնել է Ճապոնիայի «Կոմիտաս» հայկական երաժշտական ընկերությունը (հայտնի նաեւ որպես Տոկիոյի «Կոմիտաս» կենտրոն), որի միջոցով կազմակերպել է համերգներ, կրթական ծրագրեր եւ մշակութային փոխանակումներ՝ նվիրված Կոմիտասին եւ նրա ստեղծագործական ժառանգությամբ ներշնչված հայ կոմպոզիտորների երաժշտությանը: Բազմաթիվ համերգներով հանդես է եկել Ճապոնիայում, Հայաստանում, Ռուսաստանում եւ եվրոպական երկրներում՝ համագործակցելով միջազգային ճանաչում ունեցող երաժիշտների հետ, որոնց մեջ են սոպրանո ***Արաքս Մանսուրյանը***, *ջութակահար* ***Կարեն Շահգալդյանը***, ***Կոմիտաս լարային քառյակը*** *եւ ուրիշներ: Համերգային գործունեությանը զուգահեռ Ակիբան ակտիվ մանկավարժական գործունեություն է ծավալում: Այժմ Սիչիի արվեստների համալսարանի դաշնամուրի ամբիոնի դոցենտ է: Նրա պաշտոնական կայքն է՝ www.takahiroakiba.com:*

- Սիրելի՛ Տակահիրո-սան, կարծում եմ՝ ձեզ հաճախ են տալիս այս հարցը. ինչո՞ւ հենց Կոմիտաս:

-Կոմիտասն այն անձն է, որը երաժշտության միջոցով ամենամաքուր կերպով բացահայտեց հայկական ազգային ինքնությունը: Անգամ համաշխարհային մասշտաբով հեշտ

չէ գտնել մեկ այլ երաժիշտի, որը նման խորաթափանց, անսահման մաքուր նվիրումով կարողացել է զտել իր ժողովրդի հոգեւոր կյանքի՝ դարերով կուտակված հսկայական էներգիան, այն վերածել խորհրդավոր ազդեցություն ունեցող նոտաների եւ հնչող երաժշտության (թեեւ համաշխարհային երաժշտության պատմության մեջ կան մի քանի երեւութաբար նման օրինակներ): Կոմիտասն իր ժամանակից առաջ հայ երաժշտության վրա կուտակված խիտ, բազմազգ շերտերը խնամքով մաքրել է եւ երաժշտության զորությամբ մշակեց իր երաժշտական հայրենիքը՝ ստեղծելով մի տարածք, որի մեջ ոչ ոք եւ ոչինչ չի կարող ներխուժել: Որպես պատերազմների եւ ներխուժումների քաոսի մեջ գտնվող այս աշխարհի բնակիչներից մեկը՝ ես փրկություն եմ գտնում Կոմիտասի կառուցած մարդկային ինքնության՝ բացարձակապես անձեռնմխելիության այս ներքին ներդաշնակության զգացողության մեջ:

- Ավելի քան տասը տարի է, ինչ դուք Կոմիտասի երաժշտությունը ներկայացնում եք տարբեր երկրների ունկնդիրներին: Ինչպե՞ս կբնութագրեք նրա երաժշտությունը եւ ընդհանրապես հայ երաժշտությունը: Այն ավելի մոտ է Արեւելյան Եվրոպայի՞ն, Արեւմտյան Ասիայի՞ն, երկուսի միջե՞ւ է, թե՞, հայոց այբուբենի պես, դուրս է նման դասակարգումներից:

-Կոմիտասի երաժշտական ժառանգությունը նման է ծառից դեռեւս չքաղված թարմ պտուղների: Հայ երաժշտության հսկաները՝ Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Տիգրան Մանսուրյանը, ինչպես նաեւ բազմաթիվ այլ նշանավոր ժամանակակից երաժիշտներ, իսկապես սնվել են «Կոմիտասի ծառի պտուղներից»՝ այդ հոգեւոր սնուցման շնորհիվ գտնելով իրենց սեփական, ինքնատիպ երաժշտական լեզուն:

Իհարկե, հայ երաժշտության վրա ակնհայտ են նաեւ ռուսական եւ խորհրդային երաժշտական արվեստի ազդեցությունները: Օրինակ, Չայկովսկու երաժշտական դրամատուրգիայի մեծ ազդեցությունը Խաչատրյանի բալետների վրա կամ Ռախմանինովի արվեստի ազդեցությունը Բաբաջանյանի եւ Էդուարդ Բաղդասարյանի դաշնամուրային մտածողության վրա: Նույնքան հետաքրքրական է հետեւել, թե ինչպես է Տիգրան Մանսուրյանի ստեղծագործական ճանապարհին արեւմտյան ավանգարդի եւ հայ ոգու խոր փոխազդեցությունից աստիճանաբար բյուրեղացել այն յուրօրինակ երաժշտական լեզուն, որը հիմնված է մաքուր հայկական պոեզիայի վրա:

- Անցյալ հունիսի 11-ին Երեւանում կայացած ձեր համերգից հետո ընկերներից մեկը սոցիալական ցանցում գրել էր. «Կատարում, որ հոգուդ լարերին է դիպչում, լիցքավորում է քեզ: Շատ օտարազգի երաժիշտներ, երբ գալիս են Հայաստան, փորձում են հաճոյանալ հանդիսատեսին եւ որեւէ հայ կոմպոզիտորի գործ նվագել (այո, նվագել, բայց ո՛չ կատարել, ո՛չ զգալ, ո՛չ միջով անցկացնել), բայց այս ճապոնացի դաշնակահարը՝ Տակահիրո Ակիբան, զգում եւ ապրում է հայ երաժշտության ամեն հնչյունն ու փոխանցում է մեզ»:

Ես լիովին համաձայն եմ նրա հետ: Ինչպե՞ս է ձեր մեջ ձեւավորվել հայ երաժշտության հետ այսքան խորը զգացական եւ ստեղծագործական կապը:

-Սրտանց շնորհակալ եմ ձեզ եւ ձեր ընկերոջը նման ջերմ խոսքերի համար: Սակայն ես երբեք գիտակցաբար չեմ մտածել, թե ինչպե՛ս է ձեւավորվել այդ կապը: Ես պարզապես ամեն ինչ անում եմ, որպեսզի հնարավորինս ճշգրիտ լսեմ եւ արտահայտեմ այն, ինչ ինձ ասում են նոտաները՝ կոմպոզիտորի մտադրությունը հասկանալու միակ իրական միջոցը, եւ այդ ամենն իմ գործիքի միջոցով հնարավորինս հստակ հասցնեմ ունկնդրին:

-Մի քանի տասնամյակ առաջ Ճապոնիայում արդեն շատ հայտնի եւ սիրված էր Արամ Խաչատրյանը: Կարելի՞ է ասել, որ նաեւ ձեր գործունեության շնորհիվ Կոմիտասն ու ընդհանրապես հայ երաժշտությունն աստիճանաբար ավելի ճանաչելի են դառնում ճապոնացի ունկնդիրների համար:

-Արամ Խաչատրյանի երաժշտությունն այսօր էլ շարունակում է անչափ սիրված լինել Ճապոնիայում: Ինչ վերաբերում է Կոմիտասին, ապա, իհարկե, դեռ վաղ է ասել, թե նա Ճապոնիայում նույնքան հայտնի է, որքան Խաչատրյանը: Սակայն բազմաթիվ ճապոնացի ունկնդիրներ հիացել եւ խորապես հուզվել են Կոմիտասի երգերի գեղեցկությամբ, հատկապես Հայաստանի մեծագույն սոպրանոներից մեկի՝ **Արաքս Մանսուրյանի** ճապոնական համերգաշարերի շնորհիվ, որոնք կազմակերպել էինք մենք՝ Հայաստանի դեսպանությունը եւ ես:

Բացի այդ, հայ երաժշտությունը կարեւոր տեղ է զբաղեցրել բազմաթիվ հայ կատարողների համերգային ծրագրերում: Առաջին հերթին կցանկանայի նշել իմ սիրելի ուսուցչուհի Անահիտ Ներսիսյանին, ինչպես նաեւ Սվետլանա Նավասարդյանին, **«Խաչատրյան տրիոյին», Կոմիտասի անվան լարային քառյակին, Տաթեւիկ Մովսեսյանին** եւ **Սերգեյ Խաչատրյանին**, որոնց կատարումները խորապես տպավորել են Ճապոնացի ունկնդիրներին:

Իմ բազմաթիվ ուսանողներն ու սաներն էլ շարունակում են կատարել հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Հատկապես կուզեի առանձնացնել տաղանդավոր տենոր **Տոշիկի Օնոյին** (նա նաեւ չորս տարի սովորել է իմ դաշնամուրի դասարանում), որը Կոմիտասի երգերը հրաշալիորեն կատարում է հայերեն: Մի քանի տարի առաջ սոցիալական ցանցերում հրապարակված նրա՝ Կոմիտասի «Լե, լե, յաման»-ի կատարումը հսկայական թվով դիտումներ հավաքեց եւ բարձր գնահատականի արժանացավ հայ մասնագետների կողմից:

- Կոմիտասը հավաքեց, պահպանեց եւ ժողովրդական երգերը վերածեց բարձրարվեստ ստեղծագործությունների: Որպես կատարող՝ ինչպե՞ս եք հավասարակշռում նոտագրությանը հավատարիմ մնալը եւ սեփական ստեղծագործական մեկնաբանությունը դրսեւորելը: Եվ կա՞ Կոմիտասի որեւէ ստեղծագործություն, որն առանձնապես հոգեհարազատ է դարձել ձեզ:

-Ինչպես բազմաթիվ մեծ երաժիշտներ են նշել, նոտագրությունը երբեք չի կարող ամբողջությամբ փոխանցել կենդանի ռիթմի ճշգրտությունը կամ երաժշտական արտահայտման ընթացքում անխուսափելիորեն առաջացող բնական շեղումները: Իրականում հենց այդ «չգրված հատվածներում» են թաքնված տարբեր ժողովուրդների ավանդական երաժշտությունը բնիկի պես զգալու եւ արտահայտելու բանալիները:

Իմ դեպքում այդ բացը լրացնելու լավագույն միջոցը հայ ավանդական երաժշտության իսկական կատարումները լսելն է, ինչպես նաեւ Կոմիտասի սեփական ձայնագրությունները եւ լեգենդար երգիչների, առաջին հերթին՝ Արաքս Մանսուրյանի կատարումները:

Իսկ Կոմիտասի ստեղծագործություններից ինձ համար ամենասիրելին «Պատարագն» է: Նրա առաջին իսկ հնչյուններից արցունքներն ինքնաբերաբար հոսում են աչքերիցս:

-Ի՞նչ ակնկալիքներ ունեք հայ-ճապոնական երաժշտական եւ մշակութային համագործակցության ապագայի վերաբերյալ: Կա՞ն ծրագրեր, համատեղ նախագծեր կամ ձայնագրություններ, որոնց միջոցով կցանկանայիք հայ երաժշտությունն ավելի լայնորեն ներկայացնել աշխարհին:

-Երազանքներս շատ են, սակայն դրանց իրականացումը հեշտ չէ: Ամենից առաջ ծրագրում եմ այս տարվա աշնանը կամ հաջորդ տարվա սկզբին տենոր Տոշիկի Օնոյի հետ կազմակերպել «Կոմիտասիանա» խորագրով համերգային ծրագիր:

Բացի այդ, շատերն արդեն վաղուց ինձ հորդորում են, որ վերջապես ժամանակն է ձայնագրելու մի սկավառակ, որտեղ կընդգրկվեն Կոմիտասի եւ հայ այլ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունները: Տեսնենք, հուսով եմ՝ դա նույնպես իրականություն կդառնա...

Ձախից աջ՝ Տակահիրո Ակիբան երգիչներ Տոշիկի Օհնոյի, Էմի Մացուբարայի եւ Տաթ-իկ Մովսեսյանի հետ Լյութերական Իչիգայա դահլիճում (Տոկիո, 2019):

Օրինազուրկ, մանրացող խորհրդարան՝ հաճախ խորթարան հիշեցնող

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովում վերջին տարիների մի տարածված մշտական օրինախախտում է «ա»-ախոսությունը՝ «է» բայի փոխարեն («ասում ա», «մարդ ա»...), սկսած ղեկավար պաշտոնյաների հրապարակային խոսքից: Եվ՝ երեւանաբարբառ շատ բառերի, արտահայտությունների գործածությունը: Մինչդեռ ՀՀ օրենքով՝ եթե մեր պետական լեզուն հայերենն է ընդհանրապես, ապա մեր պաշտոնական լեզուն գրակա՛ն հայերենն է: Իսկ օրենսդիր մարմին խորհրդարանը մեր երեւի ամենապաշտոնական վայրն է, որը, թերեւս ավելորդ է ասելը, նախ ինքը օրինապահության օրինակ պետք է որ ծառայի:

Պարզվում է՝ կա եւ հարակից երկրորդ օրինախախտումը: Աժ ֆեյսբուքյան պաշտոնական էջի անունը վերեւում մեծ տառերով գրված է նախ օտար լեզվով (անգլերեն), ապա միայն՝ մեր ազգային պետական լեզվով: Մինչդեռ թե՛ պետական արժանապատվության չգրված օրենքով, թե՛ մեր գործող պետական օրենքով հակառակը պետք է լինի, այն էլ՝ հայերենի՛ գերակայությամբ...

Իսկ շարադրանքիս վերնագիրը, ինչպես եւ հետագա մի երկու նկատառումները, ՀՀ մի քաղաքացուս եւ ընտրողիս տպավորությունն ու արձագանքն են քպ-աղեկ այս խորհրդարանի հատկապես առաջին օրերի նիստերի դիտածս հատվածներին եւ դրանց հետ կապված որոշ հարցերի:

Հայտնի բան է, չէ՞. ում շատ է տրված՝ նրանից շատ էլ պահանջվում է: Անկախ ՀՀ առաջին նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսյանի** կառավարման շրջանի նկատմամբ մեր վերաբերմունքից, ժամանակին նրա արտահայտած մոտավորապես հետեւյալ բանաձեւային մի միտքը, թե՝ ով ստանձնում է իշխանություն, նա պետք է պատրաստ լինի իր հասցեին ե՛ւ օրհնանք, ե՛ւ անեծք լսելու, երեւի հարկ է որ գրվի գործող ամեն իշխանության «դրոշին»:

Վերջին ութ տարիներին Հայաստանի «կառքը վարող» «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, նրա կազմած պետական պաշտոնեությունը կարծես թե դրան այդպես էլ չի համաձայնում... Տարբեր քննադատողներ, իրենց պլաններին խանգարողներ կամ իրենց մեծարգո առաջնորդին ընտրություններում մրցակից լինելու փորձ անողներ («գլուխը պատովն է տալիս, որ ուզում է վարչապետ լինել...») հանկարծ պարզվում է՝ իրավական որեւէ մեղանչում, հանցանք ունեն գործած: Երբ Գյումրիում պետք էր իշխանություն վերցնել (կառավարում էր օրինական ընտրված «Բալասանյան դաշինքը»), մեղադրանքներ ի հայտ եկան թե՛ արդեն նախկին քաղաքապետ **Սամվել Բալասանյանի** որդու (ձերբակալվեց), թե՛ իր՝ երկրից բացակայող Բալասանյանի նկատմամբ (հետախուզում հայտարարվեց): Գյումրու ավելի վաղ քաղաքապետ եղած **Վարդան Ղուկասյանի** նկատմամբ էլ արդեն վեց տարի իրավական գործընթաց կար, բայց գործը ոչ այս այս կողմ, ոչ այն կողմ հանգուցալուծում չէր ստանում, ու Ղուկասյանը նույնիսկ հնարավորություն ունեցավ երկրորդ անգամ ընտրվելու քաղաքապետ: Բայց հենց միայն երբ նա կարծիք հայտնեց Ռուսաստանի հետ Հայաստանի միություն կազմելու եւ արտահայտություններ արեց հանրապետության իշխանության վերաբերյալ, պարզվեց՝ ինքը վերջերս մի նոր հանցանք է գործել՝ կաշառք, ու հետեւեց ձերբակալություն, կալանք: Պատահակա՞ն համընկնումներ էին: Հայտնի է՝ ինչ տեղի ունեցավ նաեւ **Գագիկ Ծառուկյանի** հետ այն բանից հետո, երբ այս ընտրություններին նրա ԲՀԿ-ն մասնակցեց եւ **Փաշինյանը** սպառնաց Ծառուկյանին: Եթե նա այդքան իրավական մեղանչումներ ուներ, այս ութ տարում դրանք նո՞ր միայն ի հայտ եկան:

Երբ վարչակազմը երկրի համար կարեւոր որեւէ հարցում ինքնաստեղծ մի որոշում է կայացնում, ոչ մի գիտական, մասնագիտական եւ ինստիտուցիոնալ համախումբ կարծիք, խոսք ու քննադատություն ըստ էության հաշվի չի առնում, ինչպես եղել է, օրինակ, կրթության հետ կապված տարբեր՝ նաեւ հանգուցային հարցերում: Ինչը խորհրդարանով է անցնում, այստեղ ըստ կարգի քննարկում իհարկե լինում է: Այս նոր գումարման Ազգային ժողովում առաջին տպավորությամբ թերեւս կարելի է նկատել երկու միտում: Մի կողմից՝ ելույթներում, քննարկումներում փոխադարձ բարեկիրթ լինելու հորդոր ու ձգտում, մյուս կողմից կարծես հրահանգ կա, որ ընդդիմադիր խմբակցությունների, նրանց պատգամավորների քննադատությունները, կարծիքները պարտադիր հերքվեն, սխալ ու անարժեք համարվեն: Եվ հաճախ ոչ թե այդ քննադատություններին, կարծիքներին են ըստ էության պատասխանում, այլ դրանք հնչեցնողներին. դու այս ես, քո թիմակիցը, ձեր կառավարման ժամանակ այս էր, այն էր:

Իհարկե, չենք ուզում ասել, թե ընդդիմությունն էլ կատարյալ է: Մի ընդդիմադիր պատգամավոր՝ **Էդգար Ղազարյան**, դիպչողական արտահայտություն էր արել, մի երկու օր՝ օ՜, պիտի ներողություն խնդրեք, չէ որ չէ՝ ինքը պիտի գա նախ ներողություն խնդրի, հետո կմտածենք... Լավ, իսկ ո՞վ պիտի հասարակությունից ներողություն խնդրի թեկուզ ձեր ղեկավարի հայտնի նախընտրական ու հաճախ նաեւ հենց Աժ ամբիոնից հնչող, պառակտում ու թշնամանք սերմանող տարբեր «ոչ նորմատիվ» արտահայտությունների, սպառնալիքների, ոչ ձեր կուսակցության հնարավոր ընտրող առնվազն հարյուր հազարավոր քաղաքացիների «շուն ու շանգյալներ» նրա նախապես հնչեցրած որակումի համար: Գործադիրից եկած քպական պատգամավորը մյուս խմբակցությունների ուղղությամբ ձեռքերը թափ տալով ու մատ տնկելով (ինչը պարզ անքաղաքավարություն է), ժողովրդական պատկերավոր արտահայտությամբ՝ կարծես «Նիկոլից ավելի Նիկոլ» լինել հավակնելով, հոխորտում ու նաեւ պաթոսով շանտաժ էր անում՝ «դուք ո՞ւմ գաղութն եք ուզում դարձնել Հայաստանը», երբ ոչ սակավ դեպքերում հենց իրենց՝ կառավարող ուժին է հարց ուղղվում թե՝ այս ո՞ւր եք տանում երկիրը:

Երեւի առաջին նիստում էր՝ այդ նույն պատգամավորը Ամենայն Հայոց կաթողիկոսին նույն հետեւողությամբ ոչ միայն անհարգալից կերպով կոչեց ավազանի անունով, այլ նաեւ դա մի քանի անգամ կրկնեց, ինչը կարծես նման էր չգիտես ինչ հրահրելու հատուկ դիտավորության:

Հայ մարդուս ու քաղաքացուս համար ինչ-որ տեղ հասկանալի էր, երբ մեկ այլ ելույթ ունեցողի՝ պատգամավորուհու կողմից Հայ եկեղեցու առաջնորդին նույն կերպ կոչելու ժամանակ խորհրդարանական ընդդիմությունը որպես բողոքի նշան՝ ձեռքերով հարվածում էր սեղաններին: Բայց ոչ մի կերպ ընդունելի չէր, երբ Կաթողիկոսին պատշաճ կերպով կոչելու ժամանակ, իբր ի պատասխան, նույնն անում էր խորհրդարանական մեծամասնությունը, այն էլ՝ Ազգային ժողովի նախագահի՛ գլխավորությամբ: Հետո էլ նեղանում էին, երբ ասում էին՝ մանկապարտեզ:

Եկեղեցու գործերին միջամտության, Ամենայն Հայոց կաթողիկոսին իր իրավասությունների սահմաններում կատարած քայլի համար ընդհուպ դատի տալու եւ կաթողիկոս փոխելը, նորն ընտրելը իշխող կուսակցության ծրագիր ներառելու այս տարօրինակ արշավը միջազգայնորեն ընդունված նորմերի եւ մեր երկրի համապատասխան սահմանադրական դրույթների բացահայտ եւ կոպտագույն խախտում չէ՝ ի՞նչ է: Պատգամավորուհին ասում էր, թե կաթողիկոսին այդպես կոչելն իր կամ իրենց համար քաղաքական կողմնորոշում է: Գուցե հարցնենք Ազգային ժողովի պետական-իրավակա՛ն հաճնաժողովի նախագահ ընտրված ոչ սկսնակ, բայց երիտասարդ հարգելի պատգամավորուհուն. աղջիկ ջան, Սահմանադրությունն անթաքույց խախտե՞լն էլ է ձեզ համար քաղաքական կողմնորոշում:

Երբ գործ անելն արձանագրելն է

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Յուրօրինակ միջավայրում է ապրում Աստծո յուրաքանչյուր օրը հայաստանյան պայմաններում անցկացրած շատ շատերի որոշակիից զգալի հատվածը, որն արտահայտվում է **չգիտես խնդաս թե լաս** խոսույթի տեսքով: Այս պայմաններում չգիտես որտեղից հայտնված մեկը խոսում է միավորվելու, մյուսը՝ պայքարելու, երրորդը՝ ապագայի հանդեպ ինքնավստահության, չորրորդ-հինգերորդը հայտնի ու անհայտ հայցերն ու խնդիրները միացյալ ուժերով լուծելու ներուժից, պարզագույնս չնկատելով, որ առկա բոլոր բացթողումների, թերացումների ու անգամ ձախողումների համար պետությունն իր պատասխանատուներն ունի, սկսած համատիրություններից մինչեւ նախարարություններ: Մեր մարդիկ իրենց աղքատիկ միջոցներից բարեխղճորեն վճարում են թե՛ շենքշինությունների տանիքների ու շքամուտքերի նորոգումների, թե՛ բակերը ժամանցի ու հանգստի վայրերի վերածելու, թե՛ տրանսպորտում անգամ անանախադեպ թանկացման պայմաններում բարեխիղճ վճարումների պարագայում բարեփոխումներ ծավալելու, պարզ ու հասարակ շատ հոգսեր լուծված տեսնելու ակնկալիքով:

Ավաղ ու հերթական անգամ ավաղ, քանզի ընդամենը տարիներ առաջ 200 հազար դրամ վաստակող նորելուկ պաշտոնյային չի բավարարում ոչ միայն դրա կրկնակին ու եռակին, այլեւ քառակին ու հնգակին: ՀՀ պաշտոնյան յուրաքանչյուր ծախողման առիթով իր արդարացումն ունի՝ ինչ անում կատարելապես լավ է անում, մնացյալը ֆորս մաժորային իրավիճակ է, անհաղթահարելի ու անլուծելի, ինչպես հայաստանյան գնաճն ու երեւանյան խցանումները:

Ասենք թե՝ չասենք հայ գյուղացուն մտահոգող կարկտաբեր ամպերի դեմ պայքարը անհուսալի գործ է, թող գյուղացին իր գլխի ճարը տեսնի, պետությունն ընդամենը մասնակի օժանդակություն կարող է ցուցաբերել: Գիտենք, չէ՞, որ կարկուտը ծեծած տեղն է գալիս, մարդիկ նախորդ ավերից ուշքի չեկած՝ նոր փորձանքի առաջ են հայտնվում, քանզի անհատներով ի զորու չեն լուծել կարկտաբեր ամպերի ցրումը, աղետի կանխումը: Մարդկանց բերքի մինչեւ 100 տոկոս կորստի պայմաններում ավերվում են բնակարաններն ու ավտոմեքենաները, օժանդակ կառույցներն ու այգիների ծառերն ու թփերը, շուկան զրկվում է անհրաժեշտ բերքից ու բարիքից, գներն են բարձրանում եւ այս ամենը փոխարինվում է մեն մի միջոցով՝ աննշան մի փոխհատուցումով: Լուծում է համարվում միլիարդների վնասը միլիոններով փոխհատուցելը, որը պակաս մտահոգիչ չէ ոչ հարուստ բյուջե ունեցող երկրի համար: Ահազանգում են նաեւ արեւային մարտկոցներ տեղադրած բնակիչները, որոնց կրած վնասների փոխհատուցման մասին ընդհանրապես չի խոսվում:

Հարցեր, հարցեր, հարցեր, որոնք ծագում են օրվա ժամերի հաջորդականությամբ, միայն այն տարբերությամբ որ ժամանակը գնում է, հարցերը՝ մնում, որոնց արդյունքում դրանք խնդիրների են վերածվում: Մաթեմատիկայում անլուծելի համարվող խնդիրներ կան, որոնք այսուհանդերձ լուծվում են, հայաստանյան խնդիրները դոփում են տեղում, անշարժ են ինչպես լեռներն ու ձորերը, սկեսուրների ոմանց շուրթերը: Մեր մարդիկ քանիցս են հիշում ու հիշեցնում, որ երկրի գործադիրի ղեկավար վարչապետը չգիտի այդ խնդիրների մասին, այ երբ իմանա՝ կլուծի, կպատժի:

⇨7

Վաշինգտոնյան համաձայնագրերից մեկ տարի անց

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

Վերջին օրերում Հայաստանի քաղաքական շրջանակների քննարկման գլխավոր թեմաները ԱՄՆ-ի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համաձայնություններն (accords) են, դրանց նախաստորագրման առաջին տարվա առթիվ եւ հեռախոսազանգերը ՀՀ վարչապետի եւ ԱՄՆ-ի ու Ադրբեջանի նախագահների միջեւ:

Իրականում, Թրամփի վարչակազմը կարողացավ Հարավային Կովկասում իրականացնել մի բան, որ 1991-ից ի վեր ամերիկյան ոչ մի ուրիշ վարչակազմի չէր հաջողվել գործարկել: Խոսքը Հարավային Կովկասի ե Մերձավոր միջանցքի տարածքով Կենտրոնական Ասիան Եվրոպային, ինչպես նաեւ Հայաստանը առեւտրի միջազգային պաշարների ցանցի հետ ինտեգրելու հեռանկարին է վերաբերում: Նախաձեռնությունը ռազմավարական նշանակություն ունի Վաշինգտոնի համար, որովհետեւ այն ստեղծում է տրանսպորտի եւ հաղորդակցությունների անխափան ուղիներ, որոնք շրջանցում են Ռուսաստանը, Չինաստանը եւ Իրանը: Գաղափարը ինքնին նոր չէ անշուշտ, բայց այն երբեք իրագործման ներկա փուլին չէր հասել:

Պարզ է, որ ժամանակն այստեղ էական, կարելի է ասել կրիտիկական դեր է կատարում եւ նախագիծը անհրաժեշտ է իրականացնել ինչքան հնարավոր է արագ: Դա է իրականում պատճառը, որ այս հարցում Վաշինգտոնի բյուրոկրատական դերակատարությունը զգալիորեն նվազել է: Ամեն ջանք գործադրվում է, որպեսզի ոչ մի անակնկալ խոչընդոտ չառաջանա վարչակազմի համակարգում, որ կարողանա խախտել իրագործման ժամանակացույցը:

Խոսքը վերաբերում է ինչպես Պետքարտուղարությանը, որտեղ որոշում կայացնելու գործընթացները կարող են երբեմն շատ դանդաղ ընթանալ, այնպես էլ Ազգային անվտանգության խորհուրդին, որտեղ նույնպես որոշումներ կայացնելն ու քաղաքականության սցենարների մշակումները որոշակի ժամանակ են պահանջում նախքան գործադրումը: Ներկայիս, նման խոչընդոտներ պարզապես չկան: Երկու մրցակից հաստատություններն էլ Ռուբիոն է ղեկավարում եւ առնվազն այս ծրագրի հարցում որոշումները շատ արագ են ընդունվում:

Նույնքան կարեւոր է անդրադառնալ **Կոնստանտին Սոկոլովի** նշանակմանը, որ մեկնաբանությունների մեծ ալիք առաջացրեց: Նրա նշանակումը պետք է դիտարկել ռազմավարական միեւնույն գործընթացի անքակտելի մի մասնիկը:

Սոկոլովը քաջածանոթ է Հայաստանի բիզնես միջավայրին, նրա ուժեղ եւ թույլ կողմերին: Ավելին, նրա նշանակումը համահունչ է նաեւ բյուրոկրատական գործընթացների նվազման ավելի լայն հասկացողության հետ: Նա անմիջական, սերտ կապեր ունի **Թրամփի** վարչակազմի գլխավոր դեմքերի հետ եւ TRIPP-ի՝ միջազգային խաղաղության եւ բարգավաճման դերակատարները, ինչ խոսք, նրան վարչական օժանդակություն անպայման կցուցաբերեն:

Ներկայիս, TRIPP նախագծի գործադրումը բարդացնող հիմնական գործոնները երկուսն են՝ երկաթուղիների հարցը եւ ԱՄՆ-Իրան լարված հարաբերությունները: TRIPP-ը ամերիկյան ռազմավարական մի ծրագիր է, որը Իրանի սահմանին շատ մոտիկ է, իր հնարավոր ազդեցությունների բոլոր ենթատեքստերով, որոնք կարող են որոշակի մտահոգություններ պատճառել նաեւ ամերիկյան կողմին, հատկապես հարաբերությունների խիստ լարվածության ներկա փուլում, ինչը կարող է դանդաղեցնել գործընթացի իրականացումը:

Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ տեղի կունենա, եթե TRIPP-ը չկայանա տարբեր պատճառներով, որոնք կախված են տարածաշրջանում ընթացող զարգացումներից, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-Իրան լայնածավալ պատերազմ, Մ. Նահանգների ներսում քաղաքական խլրտումներ կամ այլ խնդիրներ: Ի՞նչ է պատահելու, մասնավորապես Հայաստանին, եթե նախագիծը չիրականանա:

Ադրբեջանը քանիցս կրկնել է եւ շարունակում է պնդել, որ անկախ ամեն ինչից, ցանկանում է անմիջական, ուղիղ կապ հաստատել Նախիջեւանի հետ, եւ Հայաստանը պետք է այդ կապի միջանցքը տրամադրի իրեն, այլապես ամերիկյան նախաձեռնությունը չի կարող իրականություն դառնալ:

Երկրորդ հնարավոր սցենարն այն է, որ Ռուսաստանը դառնա միջնորդ այդ գործընթացին՝ համաձայն 2020 թվի նոյեմբերի 9-ի պայմանավորվածության, որտեղ Ռուսաստանը Ադրբեջանին վստահեցնում է իրականացնել այդ կապը ՀՀ տարածքով եւ ապահովել Ադրբեջանի անվտանգությունը:

Անշուշտ այլ միջնորդներ եւս կարող են հայտնվել: Պետություններ՝ որոնք կարող են ազդեցություն բանեցնել Հայաստանի կամ Ադրբեջանի վրա, օրինակ՝ Թուրքիան կամ Չինաստանը, որոնք որպես միջնորդ պատրաստ կլինեն իրագործել ծրագիրը, եթե Մ. Նահանգները ինչ-ինչ պատճառներով չկարողանա ինքը կարճ ժամկետում գործարկել այն:

Ընդհանուր առմամբ, կարծես Վաշինգտոնը ձգտում է առաջ տանել ծրագրի կատարումը ամենակարճ ժամկետում: Տրամաբանական հիմնավորումը պարզ է: Թրամփի վարչակազմը ցանկանում է նախագծի իրագործումը տեսնել մինչ Ռուսաստանն ու Իրանը զբաղված են իրենց խնդիրներով, մարտահրավերներով, եւ մինչ Թրամփը դեռ Մ. Նահանգների նախագահն է:

Այս պատճառներով Վաշինգտոնը ամենայն հավանականությամբ կրկնապատկելու է ջանքերը եւ ավելի մեծ ռեսուրսներ է հատկացնելու, որպեսզի առաջ տանի մեկ տարի առաջ նախաստորագրված այս ծրագիրը: Հավանական է, որ առաջիկայում ամերիկյան ակտիվության նոր թափ նկատվի, որն այլ համաձայնեցված ջանքերի ուղեկցությամբ ծրագիրը իր բարեհաջող ավարտին կհասցնի:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
The Armenian Mirror-Spectator

Ի՞նչ անելն արձանագրելն է

⇨6

Գրեթե յուրաքանչյուր առիթով է նա խոսում ու հիշեցնում առեւտրային կտրոնները վերցնելու ու պահանջելու մասին, սակայն չգիտես ինչու նախընտրական շրջանում արած բազմաթիվ առեւտրի ընթացքում պարզապես **մոռանում** էր կտրոն պահանջել: Հետ շրջեք այդ օրերի նկարահանումները եւ բազմիցս կհամոզվեք, որ ասվածը ոչ այնքան ընդդիմադիրի խոսք է, որքան ՀՀ բյուջեի կատարման հանդեպ մտահոգություն, եթե կուզեք՝ պատասխանատվության:

Ո՞ւր էինք, ո՞ւր հասանք, կնկատեն ոմանք: Հատկապես ՀՀ բյուջեից ակտիվ սնվողները, ովքեր այս շրջանում թե երկրորդ-երրորդ բնակարանատերեր դարձան, թե ավտոմեքենաները հիմնավորապես նորոգեցին, թե հանգստավայրերի աշխարհագրությունը ընդլայնեցին, մի խոսքով՝ կյանքը բարեփոխեցին: Դե, իրենք ի՞նչ կապ ունեն կարկուտից տուժածների հետ, նվազագույն կապ անգամ չունեն հենց թեկուզ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության հետ, ուր հարկ է որ մտածեն կարկտաբեր ամպերը ցրելու միջոցների մասին: Այստեղ չեն հրաժարվում խնդրի հանդեպ իրենց բաժին կատարումից, միայն թե՝ համապատասխան կադրերի պակաս կա, դպրոցներում ֆիզիկայի ու մաթեմատիկայի ուսուցումն է ուշադրության կարոտ: Առայժմ մանկապարտեզները հանգիստ թողնենք, նրանց հիշելու ժամանակը դեռ կգա:

Ահա այսպիսի միջավայր մերօրյա իրականությունում, որտեղ անմեղսունակ կարկուտն իր հերթական սեւ գործն է կատարում, իսկ այն կանխելու պատասխանատվություն ունեցողները նայում են ու արձանագրում: Պարզ չէ՝ միայն ի՞նչը, քանզի արձանագրումներին հետեւում են հերթական արձանագրումները, որոնք կազմում են երբեւէ առաջին դասարանում... մեղա, մեղա, մեղա...

Այսպես էլ ապրում ենք:

Իմաստաբանական բառարան

Մեր բառապաշարի անբաժանելի մասը

Տարբեր լեզուներում բառերի կամ հասկացությունների անվանումները սովորաբար կապված են տվյալ ժողովրդի կենցաղի, մշակույթի, մասնագիտությունների, բնաշխարհի, պատմության կամ սոցիալական հարաբերությունների հետ:

Օրինակ՝ իրանական լեզվամշակույթում առանձնապես հարուստ են ձիու, ձիավարության եւ ռազմարվեստի հետ կապված բառապաշարային շերտերը: Թուրքերենը շատ հարուստ է քոչվորական կենցաղին առնչվող բառերով: Կենդանիների տարիքն ու սեռը տարբերակող անվանումները հաճախ ավելի մանրամասն են, քան տարածաշրջանի մյուս լեզուներում:

Հայերենի առանձնահատուկ հարուստ ոլորտներից մեկը խաղողագործության եւ գինեգործության բառապաշարն է: Օրինակ՝ խաղող, որթ, այգի, գինի, քացախ, մաճառ, տերեւաքաղ, այգեկութ եւ այլն: Բացի ընդհանուր գործածության բառերից՝ բազմաթիվ բարբառներում պահպանվել են նաեւ խաղողի մշակման, բերքահավաքի, գինու պատրաստման, ինչպես նաեւ գինեգործական անոթների ու գործիքների անվանումներ: Խաղողօրհնեքի ավանդույթը Հայաստանում նույնպես դրա վկայություններից է:

Բայց, ափսոսանքով պիտի նշեմ, որ հայերենում, թեկուզեւ ժարգոնային մակարդակում, բավական մեծ տեղ են զբաղեցնում մարդու ինտելեկտն ու մտավոր կարողությունները բնորոշող բառերն ու արտահայտությունները: Թերեւս սա էլ հայի սրամտության եւ հնարագիտության յուրօրինակ վկայությունն է:

Մեր առօրյա բառապաշարի անբաժանելի մասը կազմող ստորեւ ներկայացվող այս ցանկը, ցավոք, ամբողջական լինելու հավակնություն չունի:

«Յանը տարած» արտահայտության միջոցով հայերը նկարագրում են հասարակական կյանքում իրավիճակին ոչ համարժեք արձագանքող մարդկանց:

«Խփո» («խփնված») արտահայտությունը նույնպես մարդու խելամտության աստիճանը գնահատող՝ հայերենում լայն տարածում գտած բառային միավորներից է:

«Կտտցրած» բառը խոսակցական հայերենում եւ ժարգոնում փոխաբերական իմաստով օգտագործվում է խենթ, խելապակաս, տարօրինակ կամ ոչ ադեկվատ վարքագիծ ունեցող մարդկանց բնորոշելու համար:

«Շարիկները պակաս» արտահայտությունը նույնպես այդ շարքից է եւ օգտագործվում է այնպիսի մարդու բնութագրման համար, ով իր մտավոր կարողություններով զիջում է շրջապատի մարդկանց:

«Գժուկ» բառը հայերենում ոչ թե հոգեբուժական եզրույթ է, այլ բնութագրում է տարօրինակ կամ անկանխատեսելի արարքներ թույլ տվող անձանց:

«Լարերը խառնած» արտահայտությունն օգտագործվում է տրամաբանական կապերը խախտված եւ իրավիճակին ոչ համարժեք արձագանքող մարդկանց բնութագրելու համար:

«Շիֆրը գնացած» արտահայտությունը նկարագրում է ամբողջությամբ ադեկվատությունը կորցրած, «խելքը թռցրած» մարդուն:

«Ֆազերը գցած» արտահայտությունը վերաբերում է մարդու ակնթարթային կամ հուզական վիճակին:

«Մի տախտակը պակաս» արտահայտությունը վերաբերում է մարդու բնավորությանը, ինտելեկտին կամ հոգեվիճակին:

«Ծալապակաս» բառն էլ հորինվել է մարդկանց թեթեւամտության աստիճանը բնութագրելու համար:

Փորձում եմ բացատրություն գտնել մեր ազգային բնավորությանը ոչ այնքան բնորոշ թվացող այս կարգի բառապաշարի առատության համար:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Խոստովանություններ արվեստի եւ գրականության մասին

1.ԺԱՄԱՆԱԿԸ

Ժամանակն այնպիսին է, ինչպիսին նրա մարդիկ: Հակառակը չէ ամենեւին: Էն որ ասում են՝ ժամանակները փոխվել են, դա ճիշտ չէ, մարդիկ են փոխվում, ժամանակը միշտ նույնն է՝ մշտական ներկա:

Մարդիկ իրենց բարքերով, ձգտումներով, մտքերի մեծությամբ կամ մանրությամբ դառնում են ժամանակի բնութագրիչը, հոմանիշը, զուգահեռը՝ ոնց կուզեք: Արվեստի, գրականության մարդկանցից սկսած՝ մինչեւ պետության ղեկավարներ: Ու նայած ինչ պահանջարկ է ձեւավորում տվյալ ժամանակի մարդկանց մեծամասնությունը, դրան համապատասխան էլ ստեղծագործ կամ ղեկավարող անհատների է առաջ մղում ժամանակը: Ու ամեն մեկիս բախտը հենց դրանից է կախված՝ ինչ հանրության մեջ ես ծնվել, դրանից է կախված քո ժամանակը, նրա նկարագիրը: Բախտի բան է, էլի, ում կողքին ես ծնվում...

Առանձին անհատի տաղանդը բան չի նշանակում, նա կարող է իր ծակում պատսպարված՝ շեդեւրներ ստեղծել, բայց դրանք պահանջարկ չունենան, մոռացվեն, հայտնի չլինեն, անցնեն-գնան, լավագույն դեպքում՝ նրա մահից շատ տարիներ անց պատահական օրինաչափությամբ հայտնի դառնան՝ շոյելով հանրության այն էգոիզմը, որը ժամանակին թույլ է տվել գլուխգործոց ստեղծողին մեռցնել կարիքի կամ անհայտության մեջ եւ կամ ուղղակի մարդկանց միջամտության արդյունքում: Աստված գիտե, թե մարդկությունը քանի Արթուր Փինաջյանի կամ Չարենցի չգիտե, որոնց ստեղծագործություններն, այնուամենայնիվ, կորել են նրանց կյանքի հետ ու հետմահու ճանաչման անգամ չեն արժանացել, ինչպես նշածս անունների դեպքում է: Այսինքն՝ բուն կյանքի անարդարություններն այն անարդարությունների հանրագումարն են, որ ամենքս մեր ապրած կյանքով, արարմունքներով եւ ստեղծած գործերով կուտակում-իրար ենք կպցնում՝ մեզ, մեր ժամանակը, նրա բնութագիրն աղճատելով եւ իրոք ամենաընտիրն ու ամենաոգեղենը չդարձնելով այդ բնութագրի ճանաչելի գիծ:

Արթուր Փինաջյանն ԱՄՆ-ում ապրող հայ հաշվապահ էր, որը ողջ կյանքում նկարել է, իսկ մեռնելիս քրոջն ապսպրել՝ վառել իր նկարները: Միայն երջանիկ պատահականությամբ այդ նկարները չեն ոչնչացել-հայտնաբերվել են եւ ամերիկյան գեղանկարչության ձեռքբերումների մաս կազմել: **Եղիշե Չարենցն**, իրոք, մեր բոլորի ամեն ինչն է, բայց ինչու էին նրա կողքին գտնվել մարդիկ, որոնք նրա ժամանակը փսորեցին, ու երջանիկ պատահականություն է, որ նրա անտիպ ժառանգությունը փրկողներ եւս եղել են ու հասցրել այս ժամանակին, որպես նաեւ մեր ներկա ժամանակի իգության հարացույց՝ նույնպիսի պոեզիա եւ արձակ էլ չի ստեղծվում, չէ՞, հիմա, կամ՝ համարյա թե չի ստեղծվում: Ու նրա ժամանակի մեջ էլ այդ արձակն ու պոեզիան մարդկանց հասցնել հնարավոր չէր, որ ժամանակը չդառնար իրար վրա դանոս գրողների ժամանակ:

Այ հիմա էլ, երբեմն կարդում ես տարբեր հայտնի անունների, մտածում ես՝ կա՛մ դու ես բերնիդ համը կորցրել, կա՛մ ապարդյուն ընկնում ես խորության հետեւից, կա՛մ անիմաստ մաքրամոլ ես՝ լեզվի, զգացմունքների, պատկերայնության: Այլապես ոնց է՝ ուրիշները գնահատում են, մեծարում են, հուզվում են՝ կարդալով տեղապտույտ-բառախաղերը, իբր նորամուծություն գրողական տվայտանքները, մեկ-մեկ էլ՝ գրագիտությունից հեռու «առկայծումները», դու՝ չէ: Ու այս մեր ժամանակի կերպարը մատուցելու առումով, որտեղ եղել է կորստյան ցավ, անպարագիծ վիշտ, վշտի ու ցավի արանքից ծիկրակող, հերոսությանը համարժեք երջանկություն - անհասկանալի է, թե ոնց է էդ ապարդյուն բառահնարությամբ, մտքի բռնաբարությամբ եւ օնանիզմով հագեցած բառուբանը հետո ժամանակ ներկայացնելու: Ոնց որ ոչ թե գրեն, այլ մտքի հետ մենամարտի ելած՝ նրան խաբելով, ֆռռացնելով հաղթեն: Ընդ որում՝ պահանջարկվածը, ու միգուցե պահանջարկ ձեւավորողների ճաշակն էլ այդ է:

Ակամա հետ եմ նայում մյուս իմ ապրած ժամանակներին, նրանց բնութագրերին, ու հասկանում եմ, որ այսօրվա արմատներն անցյալում են:

Միգուցե մի փոքր տուրք տալով մեծերին՝ անձեռնմխելի համարեմ այն ժամանակը, որի մեջ Իսահակյան, Բակունց, Մաթեւոսյան, Սահյան, Դավթյան կար, դրանք բարձունքներ էին՝ անկախ նրանից, որ շատ դեպքերում չգիտենք անհայտ մնացած- երբեք չհանրայնացրած՝ նրանց գլխին ժամանակի բերած պատուհասներն ու դրանց արդյունքում նրանց հոգու փակ մնացած անկյունները: Նրանց հոգեզավակ սերնդին հետեւողներից եմ, հաճախ նրանց գործերը ռադիոյում հաղորդելու, կամ նրանց մտքերը հեռուստատեսություն փոխադրելու մասնակիցներից: Նրանց մի մասն ընկերներս են, որոնց համար կռիվ եմ տվել (չնայած՝ երեւի իզուր, զուտ մարդկային առումով՝ ո՛չ գրականության, եթե նկատի առնենք գրքերիս, ստեղծագործելուս նկատմամբ նրանց այսօրվա սառնարյունությունը, բայց դե Աստված նրանց հետ, վերջերս իմ հին ընկերներից մեկն ասաց այն, ինչ ես հարյուր անգամ ուրիշներին եմ ասել՝ բանի տեղ մի դիր, ստեղծիր, ու վերջ, հոգուդ պահանջմունքն ամենաբարձր չափիչն է):

Ահա այդ հոգեզավակ սերնդի հետ վաղ երիտասարդությունս սկսած, ժամանակի բոլոր գաղտնիքներն իմացած՝ վստահ ասում եմ, որ ժամանակի դիմագծի շեղումն այդ ժամանակ էլ հիսուն տոկոսանոց է, քանի որ կոմսոմոլի մրցանակ ստանալու ցուցիչը ամենեւին էլ ամենաազնիվ եւ ակունքահեն գրականության ստեղծումը չէր, ու այդ մրցանակի ստեղծած սերունդը հիմա էլ ամեն ինչի տերն է: Ու գիտենք՝ որքան աշոտավդալյաններ, տանյահովհաննիսյաններ կորան-գնացին, մի քանի հիշողաց մտքում միայն մնալով ու ճարպիկ կոմսոմոլականներին ասպարեզը զիջելով (եթե իմ ընկերներից ոմանք ինձ հետ չհամաձայնեն՝ խնդիր չէ, ոչ մի պատճառ չունեմ կեղծելու, ինչ- որ ժամանակ անկեղծ զգացածդ պետք է գրես): Չնայած՝ իրոք տաղանդավորներն էլ, փառքուպատիվ նրանց, կարողացան ճեղքել իրենց բաժին պատը: Բայց նրանց անուններն էլ ներկա բառահնար սերունդը չգիտե, ու շատ է պատահում, որ տամ Վահագն Մուղնեցյանի, Արմեն Մարտիրոսյանի, Վահագն Գրիգորյանի, Վարդան Գրիգորյանի ու էլի մի երկուսի անունները/իմ սիրելի Հովհաննես Գրիգորյանը՝ բացառություն/, մեր «մտքահեն» նորեկները լսած չլինեն նրանց մասին:

2. ԳՐԱԿԱՆ ՊՈՊՈՒԼԻԶՄԻ ՃԻԲԱՆՆԵՐՈՒՄ

Կա քաղաքական պոպուլիզմ, եւ դա ինձ համար միշտ անտանելի է եղել եւ է՛, դա թույլ է տալիս, որ միշտ փրփուրը մնա ջրի երեսին եւ մոլորեցնի մարդկանց: Բայց ինչ կասեք գրական պոպուլիզմի մասին, որ ամենուր է, խցկվում է բոլոր ճեղքերից, գրավում ամեն ազատ տարածք, փակում նորմալ գրի ճամփան եւ խթանվում ամեն կողմից: Գրական պոպուլիզմի վառ ներկայացուցիչներին նախ հավատում, ընդունում եւ մեծարում են սովորական մարդիկ, քանզի նրանց մեծ մասի մոտ ոչ ոք գրական ճաշակ չի ձեւավորել, նրանք սխալմամբ կարծում են, որ ամենագրականը հենց ճոռոմերենն է, ամենակատարյալը հենց երկրին ու հայրենիքին նվիրված էժան էպիտետների շարահյուսն է /դրանք հանգավորողն իրականում կարող է հայրենիքն ընկալել որպես անձնական սպառման առարկա/: Ապա գրական պոպուլիզմը զենք է դառնում՝ չեզոքացնելու արժանիներին, պակաս արժանիների բնագծերի պահպանման եւ վերարտադրման գրավական՝ փառքի, փողի, բարիքների սնուցարան որպես: Եւ ապա նույն՝ պակաս արժանիների ձեւավորած գնահատման ատյաններն են նույնն անում՝ նույն մտահոգություններով եւ նպատակադրումով գնահատանքի ծիսական օրգիաները շարունակում են սուրբ գործը, որպես պակաս արժանիներով ճեղքերը փակելու լավ կազմակերպված հատուկ գործողություններ: Ահա եւ գրական պոպուլիզմը միշտ թամբին է՝ սարքուկարգով, զենքուզրահով՝ հավասար եւ նույնական հիմարացնելով մարդկանց այնպես, ինչպես քաղաքական պոպուլիզմը, երկուսով միասին, ձեռք-ձեռքի թույլ չտալով մարդկանց դուրս գալ ճահճից ու տարբերել չորը թացից, համտեսել իսկականն ու արվեստավորը: Բարի վայելո՛ւմ...

3. ԳՈՒՆԱՎՈՐ ԱՇԽԱՐՀԸ

Գրողը կամ նկարիչը պատմում են իրենց կյանքը: Դուք ոչինչ չգիտեք այդ կյանքի մասին, այն , ինչ գիտեք՝ ձեր պատկերացումներն են գրողի կամ արվեստագետի մասին, եթե նրան մի թեթեւ ծանոթ եք: Բայց դուք չգիտեք՝ ինչերի միջով են անցնում նրա սիրտը, հոգին, միտքը, գիտակցությունը, որոնք բոլորն էլ, բանտարկված նրա մեջ, պատեպատ են զարկվում, վայրկյանի հարյուրերորդ մասի ընթացքում անցնում տիեզերքի բոլոր աշխարհներով եւ հարյուրմեկերորդ մասի ընթացքում արդեն վերադառնում, քանի որ կենդանի հյուսվածքի մաս են նրանք, ու այդ պատճառով միայն կարող են զգալ, բույր առնել, տեսնել գունավոր աշխարհը, ու դա հնարավոր է միայն առարկայական մարմնում: Մյուս՝ լույսի աշխարհում գույն չկա, բույր չկա, համ չկա, կատարյալ աշխարհի գեղեցիկ սիլուետները չկան,այլ՝ միայն լույսը, անպարփակ, անծայրածիր սպիտակը միայն, որ լույսի համարժեքն է: Բայց խոստովանեք, գույնը, որ միայն նյութական աշխարհինն է՝ հրաշալի է, սերը, որ մարմնինն ու նրա ներսի սիրտուհոգունն է, հրաշալի է: Հրաշալի են տառապանքը, ցավը, յոթ զգայարաններով զգացած ամեն ինչ, որ միայն նյութական մարմնի եւ նրա հինգ նուրբ շերտերի մենաշնորհն են, եւ սիրտը, հոգին, միտքը եւ գիտակցությունն այս մարմնի շնորհիվ են սիրտ, միտք, հոգի եւ գիտակցություն: Ցավ զգալ հարազատի ու մերձավորի համար, սիրել քնքշորեն, ծնող դառնալ կամ զավակ լինել, տեսնել փոքրիկ մարդու առաջին ժպիտը, տեսնել նրա հետագա կյանքը, ուրախանալ նրա ամեն ծննդյան օրով՝ միթե հրաշալի չէ...Այս բոլորը արվեստագետը, գրողը դնում են բառի, գույնի, մեղեդու մեջ, վերցրու, եթե կարող ես, եթե կարիքն ունես այս գունավոր աշխարհի, որովհետեւ մյուսում, որտեղ լույսն է՝ չկա գույն, հոտ, զգացմունք, հիշողություն, համատարած լույսը, ճիշտ է, բերկրանք է, բայց բերկրանք է առանց սիրո, բուրմունքի, համի ու հիշողության, որտեղ դու այլեւս մարդ չես, չես տխրի եւ ուրախանա, չես հմայվի ծաղիկների դաշտով, չես լսի առվակի հանգստացնող խոխոջը, չես հիանա ծաղկով ու ծաղկին նման մանկան ժպիտով: Վերցրու այն բոլորը, ինչ կա այս կյանքում, մինչեւ միանաս տիեզերքի սպիտակ լույսին:

4.ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Լավ բանաստեղծության համար պետք է հանդիպեն ժամանակը, տաղանդը եւ զգալու անհավանական սուր, անհավանական խորը բացվածքը: Այս բոլորի առկայությամբ միայն կարելի է ատեղծել այնպիսի գրականո–թյուն, որը հոսանքի պես կխփի-չի սպանի-կարթնացնի, երակները կբացի, սիրտ կամոքի, հոգին տակնուվրա կանի; Կստիպի մարդուն ներս նայել ու հարցեր տալ, հարցեր տալ ու պատասխաններ ստանալ: Կստիպի ուրիշի տառապանքի եւ սիրո միջոցով չափել իր սերն ու իր տառապանքը, գնալ ինքնահայեցման եւ մաքրման, նորոգվել ու հառնել ...

Իհարկե կարող է պատահել, որ երբեմն փրփուրները ծածկեն ծիածանագույն ձկանը նույնիսկ երկար ժամանակ, բայց չի կարող պատահել, որ արեւի լույսը ինչ-որ նախանշված պահի այնպես չթափանցի ջրերի մեջ, որ մի պահ չբոցկլտա ոսկին ծիածանագույն ձկան բազմաթիվ գույներից՝ հայտնի անելով նրա տեղը. Ու մարդիկ չուզենան ետ տանել փրփուրը՝ նրան տեսնելու եւ նրա գույներով զմայլվելու համար:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 20.08.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: